

Անկախ հաշվետվական մեխանիզմ

Արդյունքների վերաբերյալ
գեկույց.

Հայաստան 2022-2024

Open
Government
Partnership



Independent
Reporting
Mechanism

Բովանդակություն

Ամփոփագիր.....	2
Բաժին I. Հիմնական դիտարկումները.....	6
Բաժին II. Նախնական արդյունքներ	9
Բաժին III. Մասնակցություն և համաստեղծում	26
Բաժին IV. Մեթոդաբանություն.....	34
Հավելված Ա. Տվյալներ ըստ հանձնառությունների.....	37

Ամփոփագիր

Հայաստանի գործողությունների հինգերորդ ծրագրով նախատեսված հանձնառությունների կեսը զգալի չափով կամ ամբողջությամբ կատարվել են: Քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների աջակցությունն առանցքային էր մի շարք հանձնառությունների կատարման գործում արձանագրած հաջողությունների, մասնավորապես՝ տեղական համայնքներում մասնակցային բյուջետավորման ներդրման համար: Վարչապետի աշխատակազմում ստեղծված նոր վարչությունը կօգնի ինստիտուցիոնալացնել Կառավարության՝ բաց և մասնակցային կառավարման բարելավմանն ուղղված հետագա ջանքերը:

Իրականացում

Հայաստանի գործողությունների հինգերորդ ծրագիրը (2022–2024թթ.) ներառում է 10 հանձնառություն, որոնք հիմնականում ուղղված են կառավարության թափանցիկության բարելավմանը: Այս ծրագրի նոր հանձնառությունները վերաբերում են պետական մարմինների կողմից տվյալների տնօրինմանը, կառավարության հաղորդակցությանը, տեղեկատվության ազատության վերաբերյալ կարգավորումների կատարմանը, մասնակցային բյուջետավորմանն ու դատարանների թափանցիկությանը:

Վեց հանձնառությունների մասով վաղ փուլում արդյունքներ են արձանագրվել. այս հանձնառություններից երեքը խոստումնալից էին ճանաչվել գործողությունների ծրագրի ուսումնասիրության ԱՀՄ գեկույցում: Հանձնառությունների կեսը զգալի չափով կամ ամբողջությամբ կատարվել է, ինչը որոշակի հետընթաց է չորրորդ ծրագրի (2018–2020թթ.) համեմատ, որտեղ 11 հանձնառություններից յոթը զգալիորեն կամ ամբողջությամբ կատարվել էին իրականացման ժամկետի ավարտին: Հինգերորդ

Ընդհանուր ակնարկ

ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

5/10

Ամբողջությամբ կամ զգալիորեն կատարված հանձնառություններ

ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

6/10

Նախնական արդյունքներ գրանցած հանձնառություններ

2/10

Զգալի արդյունքներ գրանցած հանձնառություններ

ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

- ԲԿԳ-ին ուղղված կուռ քաղաքական աջակցությունը և հանձնառությունների՝ պետական ռազմավարությունների և միջազգային հանձնարարականների հետ ներդաշնակեցումը իրականացման գործընթացի շարժիչ ուժն են եղել:
- Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և միջազգային կազմակերպություններն վճռորոշ աջակցություն են ցուցաբերել իրականացման և նախնական արդյունքներին հասնելու գործում:
- Բաց տվյալներին և թվային բարեփոխումներին վերաբերող հանձնառությունները բախվել են տեխնիկական և ֆինանսավորման խոչընդոտների:

Իրականացման փուլում ԲԿԳ նվազագույն պահանջներին համապատասխանություն. Ոչ

հանձնառության արդյունքում Հայաստանի 71 համայնքներից 21-ում բնակիչներն այժմ կարող են մասնակցել իրենց համայնքի զարգացմանը՝ ներկայացնելով ծրագրային առաջարկներ և քվեարկելով տեղական ինքնակառավարման մարմինների կողմից դրանց իրականացման համար (համայնքային և պետական բյուջեներից հատկացված ֆինանսավորմամբ): Երկրորդ հանձնառությունը հանգեցրեց ՀՀ վարչապետի աշխատակազմում Մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչության ստեղծմանը, որի նպատակն է ինստիտուցիոնալացնել կառավարության ջանքերը բաց և մասնակցային կառավարման ուղղությամբ, այդ թվում ԲԿԳ գործողությունների հետագա ծրագրերի միջոցով:

Մի շարք հանձնառություններով նախատեսվում էր ստեղծել թվային հարթակներ, օրինակ՝ բյուջետային գործընթացում մասնակցության հարթակը (Հանձնառություն 4), հանրային ծառայողների նվերների ռեեստրը (Հանձնառություն 7) և էլեկտրոնային գնումների հարթակը (Հանձնառություն 8): Հարթակներից մի քանիսը չեն ստեղծվել տեխնիկական, ժամկետային կամ ֆինանսավորման խնդիրների պատճառով: Միննույն ժամանակ, յոթերորդ հանձնառության շրջանակներում մշակվել են համապատասխան իրավական հիմքերը՝ նվերները հաշվառելու և պետությանը փոխանցելու, ինչպես նաև նվերների հետ կապված սահմանափակումներ նախատեսող կարգավորումների իրականացման նկատմամբ հանրային և ներքին վերահսկողություն սահմանելու նպատակով՝ դրանով իսկ նպաստելով ազգային հակակոռուպցիոն ռազմավարության և միջազգային հանձնարարականների կատարմանը:

Մասնակցություն և համաստեղծում

Հայաստանում ԲԿԳ գործընթացը ղեկավարում է ՀՀ վարչապետի աշխատակազմը (Աշխատակազմ): ԲԿԳ հարցերով պատասխանատուն համակարգում է գործունեությունը, իսկ Աշխատակազմի ղեկավարը վերահսկում է գործընթացը: Երկրորդ հանձնառության շրջանակներում Աշխատակազմում ստեղծվել է Մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչություն՝ հանրային մասնակցությունն ինստիտուցիոնալ եղանակով կազմակերպելու և համակարգելու, ինչպես նաև ԲԿԳ նախաձեռնություններին ու բաց կառավարմանն առնչվող այլ ջանքերին աջակցելու համար:

Գործողությունների հինգերորդ ծրագրի մշակման ընթացքում ակտիվ համաստեղծման գործընթաց տեղի ունեցավ, երբ շահագրգիռ կողմերի լայն շրջանակ մասնակցեց առցանց և առկա ձևաչափով հանդիպումներին: Սակայն իրականացման փուլում մասնակցությունը համեմատաբար ավելի սահմանափակ էր: Կառավարությունը 2023 թվականի փետրվարին կազմակերպեց հանրային միջոցառում՝ գործողությունների ծրագիրը ներկայացնելու և իրականացման համար համագործակցության հնարավորություններն ուսումնասիրելու համար: Իրականացման առաջին տարվա վերջում կառավարությունը փոփոխություններ կատարեց գործողությունների ծրագրում՝ հաշվի առնելով շահագրգիռ կողմերից ստացած արձագանքը և գործողությունների ծրագրի ուսումնասիրության ԱՀՄ գեկույցի առաջարկությունները: Փոփոխությունների արդյունքում հստակեցվել են որոշ հանձնառությունների նկարագրությունները, այդ թվում՝ առաջին հանձնառության շրջանակներում տվյալների տնօրինման քաղաքականությանը վերաբերող օրենքները, երկրորդ հանձնառության ներքո մասնակցային կառավարման ստորաբաժանում ստեղծելու նոր միջանկյալ թիրախը և ութերորդ հանձնառությամբ նախատեսված էլեկտրոնային գնումների հարթակի մանրամասները: 2023 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին

գործողությունների վերանայված ծրագիրը ներկայացվել է հանրային քննարկմանը իրավական նախագծերի հրապարակման (e-draft) հարթակում: Ծրագրի իրականացման առաջընթացի մասին հաշվետվողականության նպատակով 2023 թվականի կեսին և 2024 թվականի նոյեմբերին շահագրգիռ կողմերի հետ երկու առցանց հանդիպում է կազմակերպվել: Միննույն ժամանակ, հանձնառությունների մեծ մասում ակտիվ ներգրավվածություն են ունեցել քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ), որոնցից շատերը ԲԿԳ կողմից դրամաշնորհային աջակցություն են ստացել: Այս ՔՀԿ-ները հանրային իրազեկման, օրենսդրական նախագծերի վերլուծության և կարողությունների զարգացման գործողություններ են իրականացրել: Աշխատակազմը բանակցություններ է վարել միջազգային կազմակերպությունների հետ, որպեսզի վերջիններս աջակցեն ԲԿԳ հանձնառությունների իրականացմանը տեղական ՔՀԿ-ների հետ համագործակցության միջոցով: Օրինակ՝ համայնքներում մասնակցային բյուջետավորումը (Հանձնառություն 5) իրականացվել է միջազգային կազմակերպությունների և տեղական ՔՀԿ-ների զգալի աջակցությամբ, որոնք հանրային իրազեկման աշխատանքներ են տարել և համայնքապետարաններին տեխնիկական աջակցություն տրամադրել:

Իրականացումը և ընդհանուր համատեքստը

Հայաստանի կողմից ԲԿԳ հանձնառությունների իրականացման վրա մի շարք ներքին և արտաքին գործոններ են ազդել: 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից հայ բնակչության տեղահանման արդյունքում կառավարության մեծաքանակ ռեսուրսները և ուշադրությունը ուղղորդվել են մարդասիրական ջանքերի ուղղությամբ: Առաջնահերթությունների այս փոփոխությունը հետաձգել է ԲԿԳ որոշ, մասնավորապես՝ կառավարության կողմից զգալի համակարգում և ներդրում պահանջող նախաձեռնությունների իրականացումը: Որպես գործողությունների ծրագրի ժամկետի ավարտից հետո տեղ գտած և հանձնառությունների կայունության վրա ազդող մեկ այլ գործոն կարելի է նշել 2025 թվականի սկզբին ԱՄՆ արտաքին աջակցության ֆինանսավորման կասեցումը, որն էլ ավելի է հետաձգել արտաքին ֆինանսական աջակցությունից կախված հանձնառությունների կատարումը: Սա կարող է ազդել նվերների ռեեստրի ստեղծման (Հանձնառություն 7) և ռազմավարական հաղորդակցության ճարտարապետության մշակման (Հանձնառություն 2) վրա, որոնք գործողությունների ծրագրի ժամկետի վերջում դեռևս անավարտ էին:

Բացի այդ, իրականացման ժամկետների վրա ազդել են ավելի լայն քաղաքական և ինստիտուցիոնալ գործոններ, ինչպիսիք են կառավարությունում կառուցվածքային փոփոխությունները և քաղաքականության առաջնահերթությունների փոփոխությունը: Օրինակ՝ ՀՀ արդարադատության նախարարության ղեկավար կազմի փոփոխությունները և աշխատակիցների մեծ հոսունությունը դանդաղեցրել են հակակոռուպցիոն նախաձեռնությունների առաջընթացը: Չնայած այս մարտահրավերներին՝ ակնառու է ՀՀ կառավարության հանձնառությունը բաց և մասնակցային կառավարման խթանման ուղղությամբ, որի մասին է վկայում մասնավորապես Աշխատակազմում հատուկ ստորաբաժանման ստեղծումը: Այս զարգացումը Հայաստանին հնարավորություն է տալիս շարունակել ջանքերը տեղեկատվության հասանելիության և բաց կառավարման բարելավման ուղղությամբ:

¹ Մանրամասների համար տե՛ս՝ «Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների գործողությունների ծրագիրը, Հավելված ՀՀ կառավարության 2023թ. նոյեմբերի 9-ի N 1958-Լ որոշման, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=185244>:

Բաժին I. Հիմնական դիտարկումներ

Ստորև ներկայացված հիմնական դիտարկումները Հայաստանի գործողությունների հինգերորդ ծրագրի գործընթացի շուրջ մտորումներ են: Քաղված այս դասերը նպատակ ունեն աջակցել Հայաստանի գործողությունների հետագա ծրագրերին ու բաց կառավարման ավելի լայնածավալ գործընթացներին:

Դիտարկում 1. ԲԿԳ-ին ուղղված կոռ քաղաքական աջակցությունը և հանձնառությունների՝ պետական ռազմավարությունների ու միջազգային հանձնարարականների հետ ներդաշնակեցումը իրականացման գործընթացի շարժիչ ուժն են եղել:

Զգալի ջանքեր են գործադրվել գործողությունների հինգերորդ ծրագրի հանձնառություններն ազգային մյուս ռազմավարությունների և գործողությունների ծրագրերի, օրինակ՝ Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության, հակակոռուպցիոն ռազմավարության հետ ներդաշնակեցնելու համար, ինչն ամրապնդել է քաղաքական աջակցությունը և նպաստել հանձնառությունների իրականացմանը: Նմանատիպ փաստաթղթերին համահունչ հանձնառությունները զգալի ինստիտուցիոնալ աջակցության են արժանացել և քաղաքական առաջնահերթություն են դարձել: Ի լրումն, միջազգային հանձնարարականներին (օրինակ՝ Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳԲԿԳ) հանձնարարականներին, Եվրոպական միության ինտեգրման հենանիշներին) ուղղված հանձնառությունները, որպես կանոն, կառավարության կողմից ավելի կոռ աջակցություն են ստացել, ինչի արդյունքում նման շրջանակների հետ ներդաշնակեցումը ռազմավարական առավելություն է դառնում: Այսպես, նվերների ռեեստրի ստեղծման (Հանձնառություն 7) համար նպաստավոր էր ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության փաստաթղթում համապատասխան գործողության ներառումը, ինչպես նաև ԳԲԿԳ-ի և այլ միջազգային մարմինների հանձնարարականները: Նմանապես, մասնակցային կառավարման և ռազմավարական հաղորդակցության բարեփոխումները (Հանձնառություն 2) ավելի մեծ թափ են ստացել՝ Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության հետ առկա կապի շնորհիվ: Բարձր մակարդակի քաղաքական աջակցությունը խթանող ուժ է հանդիսացել նաև հինգերորդ (մասնակցային բյուջետավորում) և ութերորդ (էլեկտրոնային գնումների հարթակ) հանձնառությունների համար: Ավելին, ԲԿԳ գործընթացը նպաստել է այս նախաձեռնությունների կայունությանը: Օրինակ, ՀՀ ֆինանսների նախարարությունը ստեղծել է ինստիտուցիոնալ կառուցակարգ՝ ՔՀԿ-ների գնումների մշտադիտարկման գործընթացում ներգրավելու համար, իսկ ՀՀ կառավարությունը համայնքներին տրամադրել է լրացուցիչ ռեսուրսներ՝ մասնակցային բյուջետավորման նախաձեռնություններն ընդլայնելու համար:

Ի տարբերություն վերոհիշյալի, այն հանձնառությունները, որոնք հստակ կապ չունենին պետության ռազմավարական առաջնահերթությունների հետ, օրինակ՝ քարտեզագրական տարածական տվյալների հասանելիությանը վերաբերող վեցերորդ և «eCourt-statistics» վիճակագրական վերլուծական գործիքի մասին իններորդ հանձնառությունները, պակաս չափով իրականացվեցին: Այս հանձնառությունները կա՛մ անմիջականորեն խաբսիված չէին ոլորտային քաղաքականության հիմքում, կա՛մ չունենին համապատասխան ինստիտուցիոնալ առաջամարտիկ կառավարությունում: Հետագա հանձնառությունները կարելի է ավելի

հստակ կապակցել կառավարության կողմից իրականացվող բարեփոխումների հետ՝ կայուն քաղաքական ներգրավվածություն և ռեսուրսների հատկացում ապահովելու համար:

Դիտարկում 2. Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և միջազգային կազմակերպությունները վճարող աջակցություն են ցուցաբերել իրականացման և նախնական արդյունքներին հասնելու գործում:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ-ները) և միջազգային կազմակերպությունները նշանակալի ներդրում են ունեցել գործողությունների ծրագրի մշակման փուլում՝ համաստեղծման գործընթացում ներկայացնելով իրենց առաջարկները: Համապատասխանաբար, իրականացման փուլում նրանք կարևոր փորձագիտական աջակցություն, ֆինանսավորում և ջատագովություն են ապահովել մի շարք հանձնառություններում: Օրինակ՝ մասնակցային բյուջետավորման վերաբերյալ հինգերորդ հանձնառության շրջանակներում ՔՀԿ-ները վերապատրաստում և իրազեկման արշավներ են կազմակերպել, տեխնիկական աջակցություն են տրամադրել համայնքապետարաններին: Երկրորդ հանձնառության դեպքում քաղաքացիական հասարակության փորձագետները առանցքային դեր են ունեցել հաղորդակցության ճարտարապետության և համապատասխան ընթացակարգերի մշակմամբ զբաղվող փորձագիտական խմբում: Երրորդ հանձնառությունն առաջարկած ՔՀԿ-ն մեթոդաբանական ուղեցույց է մշակել և պետական կառույցների համար իրականացրել կարողությունների զարգացում՝ տեղեկատվության ազատության ինքնագնահատման պիլոտային համակարգի գործարկման նպատակով: Մյուս հանձնառությունների դեպքում ևս ՔՀԿ-ներն իրականացրել են իրավական վերլուծություններ, երկխոսություն նախաձեռնել և տրամադրել տեխնիկական աջակցություն:

Բազմաթիվ հանձնառությունների իրականացման ընթացքում իրազեկման և կարողությունների զարգացման հարցում կառավարությունն ապավինել է դոնորների աջակցությամբ ՔՀԿ-ների կողմից իրականացվող ծրագրերին: Ըստ ԲԿԳ հարցերով պատասխանատուի՝ այդ աջակցությունն իրականություն է դարձել կառավարության ակտիվ ներգրավվածության և որպես կառուցողական կողմ գործելու պատրաստակամության շնորհիվ²: Արդյունքում զարգացման միջազգային գործընկերները աջակցություն են տրամադրել՝ հիմնականում ՔՀԿ-ներին տրվող դրամաշնորհների տեսքով: ԲԿԳ հարցերով պատասխանատուի խոսքով՝ այս գործընթացը հնարավոր է դարձել կառավարության համագործակցության և ուղղորդման միջոցով: Սակայն նպատակային պետական ֆինանսավորման և ինստիտուցիոնալ պատասխանատվության բացակայության պայմաններում այս նախաձեռնությունները կարող են կորցնել շարունակականությունը, երբ արտաքին աջակցությունը նվազի: Բաց կառավարման հետագա բարեփոխումներում անհրաժեշտ է ՔՀԿ-ների մասնակցության բաղադրիչը ներդնել պետական կառուցակարգերում՝ նրանց ներդրումը որպես ժամանակավոր արտաքին աջակցություն դիտարկելու փոխարեն: Դա նշանակում է, որ հարկավոր է պետական բյուջեից միջոցներ նախատեսել նմանատիպ նախաձեռնությունների համար և ինստիտուցիոնալացնել ՔՀԿ-ների և կառավարության միջև համագործակցությունը, օրինակ՝ որոշակի գործողությունների պատվիրակման, բազմաշահառու խմբերի կամ խորհրդատվական մարմինների ձևավորման կամ համատեղ իրականացման այլ կառուցակարգերի միջոցով:

Վերջապես, գործողությունների հետագա ծրագրերի համար կարևոր է, որ կառավարությունը քաղաքացիական հասարակությանն ընձեռի իրականացումը վերահսկելու

հնարավորություն, հատկապես այն հանձնառությունների դեպքում, որտեղ հանրային մասնակցությունը առանձին բաղադրիչ չի հանդիսանում: Դա կարող է լինել հանձնառությունների կատարողականի վերաբերյալ բազմաշահառու խմբին պարբերաբար տեղեկացնելու, առցանց շտեմարանի (OGP repository) լիարժեք օգտագործման, հանրային լսումների կամ մամուլի ասուլիսների կազմակերպման միջոցով: Գործողությունների ծրագրի իրականացման փուլում քաղաքացիներին ակտիվորեն իրազեկելը և ներգրավելը էական նշանակություն ունի հաշվետվողականության ապահովման և հանրային վստահության ամրապնդման համար:

Դիտարկում 3. Բաց տվյալներին և թվային բարեփոխումներին վերաբերող հանձնառությունները բախվել են տեխնիկական և ֆինանսավորման խոչընդոտների:

Թվային թափանցիկությանը վերաբերող մի շարք հանձնառությունների իրականացման գործընթացում ուշացումներ են արձանագրվել՝ տեխնիկական կարողությունների պակասի, գնումների ընթացակարգերում առաջացած դժվարությունների և ֆինանսավորման խնդիրների պատճառով: Օրինակ, թեև կառավարությունն ընդունել է նվերների ռեեստրի ստեղծման համար անհրաժեշտ օրենսդրությունը, առցանց հարթակի մշակումը հապաղել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի սահմանափակ ռեսուրսների, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ծրագրով հայտարարված առաջին մրցույթի շրջանակներում հայտեր չստանալու, վարչարարության խնդիրների և, ի վերջո, գործողությունների ծրագրի իրականացման ժամանակահատվածի ավարտից հետո ԱՄՆ ՄԶԳ ծրագրի փակման հետևանքով: Նմանապես, «e-court statistics» դատական վիճակագրության հասանելիության բարելավմանն ուղղված ջանքերը (Հանձնառություն 9) սահմանափակ են եղել՝ թվային հարթակների միջև փոխգործելիության բացակայության և արդարադատության համակարգի միասնական էլեկտրոնային հարթակի ստեղծման խնդիրների պատճառով:

Որպես հետագա քայլ՝ թվային հարթակներին վերաբերող հանձնառությունները պետք է ներառեն իրականացման հստակ ճանապարհային քարտեզ՝ տեխնիկական և ֆինանսական իրատեսական պլանավորմամբ: Կարևորագույն հարցերից է թվային նոր գործիքների և գործող պետական համակարգերի միջև փոխգործելիության ապահովումը, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանրային ծառայողների վերապատրաստման աշխատանքները: Բացի այդ, կառավարությունը կարող է իրագործելիության վերլուծություններ իրականացնել՝ պահանջվող ժամկետների և անհրաժեշտ կարողությունների մասին ավելի ճշգրիտ կանխատեսումներ կատարելու նպատակով:

² Մեկնաբանությունը ԱՀՄ-ին տրամադրվել է ՀՀ վարչապետի աշխատակազմում ԲԿԳ հարցերով պատասխանատուի կողմից՝ սույն գեկույցի հրապարակմանը նախորդող վերանայման փուլում, 13 ապրիլի, 2025թ.:

Բաժին II. Նախնական արդյունքներ

Այս բաժնում վերլուծության են ենթարկվել այն հանձնառությունները, որոնք գործողությունների ծրագրում զգալի նախնական արդյունքներ են ապահովել: Վաղ փուլում արձանագրված արդյունքները հասկանալու համար ԱՀՄ-ն հաշվի է առել հանձնառությունների նպատակը, երկրի համատեքստը, տվյալ քաղաքականության ոլորտը և փոփոխությունների վերաբերյալ առկա վկայությունները: ԱՀՄ կողմից նախնական արդյունքների գնահատումը իրականացվում է տեղի ունեցած փոփոխությունների խորության, ինչպես նաև այդ փոփոխությունների՝ ժամանակի ընթացքում կայուն մնալու հիմքերի առկայության վրա: Այս բաժինը ներառում է բոլոր այն հանձնառությունները, որոնք հասել են «զգալի արդյունքների», սակայն կարող է ներառել նաև այն հանձնառությունները, որոնք հասել են «չափավոր» արդյունքների: Այս բաժնի համար հանձնառություններ ընտրելիս ԱՀՄ-ի համար մեկնարկային կետ են հանդիսանում Գործողությունների ծրագրի ուսումնասիրության գեկույցում որպես «խոստումնալից» նշված հանձնառությունները: Միննույն ժամանակ, այս բաժնում կարող են ներկայացվել նաև այն հանձնառությունները, որոնք խոստումնալից չեն համարվել, բայց գերազանցել են սպասումները:

Աղյուսակ 1. Առավել նշանակալի նախնական արդյունքներ արձանագրած հանձնառություններ

Հանձնառություն 2. Պետության ռազմավարական հաղորդակցության ճարտարապետություն

Պետական մարմիններում ռազմավարական հաղորդակցությունն ինստիտուցիոնալացնելու համար մշակվել է հայեցակարգ և հաղորդակարգեր, ստեղծվել է կառավարության ստորաբաժանում՝ մասնակցային կառավարման ընթացակարգերի մոնիտորինգի և ապահովման նպատակով:

Հանձնառություն 5. Մասնակցային բյուջետավորում տեղական մակարդակում

Մասնակցային բյուջետավորման նախաձեռնությունն ընդլայնվել է՝ նախատեսված երեք համայնքների փոխարեն այժմ ընդգրկելով արդեն 21 համայնք, պետական բյուջեից աջակցություն է հատկացվել՝ խթանելու քաղաքացիների նախաձեռնությամբ իրականացվող համայնքային ծրագրերը:

Հանձնառություն 7. Հանրային ծառայողների նվերների ռեեստր

Սահմանվել են նվերները գրանցելու և պետությանը փոխանցելու վերաբերյալ իրավական հիմքերը, նվերների սահմանափակումների վերահսկման կառուցակարգերը, գործարկվել է ժամանակավոր ռեեստր՝ պաշտոնյաների ստացած թույլատրելի նվերների թափանցիկությունն ապահովելու նպատակով:

Հանձնառություն 2. Պետության ռազմավարական հաղորդակցության ճարտարապետություն

Պատասխանատու մարմին՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ

Համատեքստ և խնդիրներ

Այս հանձնառության նպատակն էր մշակել միասնական քաղաքականություն, որը կուղղորդեր բոլոր պետական մարմիններին հանրության հետ հաղորդակցության, այդ թվում՝ տեղեկատվության տրամադրման և հանրային արձագանքի ապահովման գործում: Նախքան հանձնառությունը Հայաստանում չկար հանրային հաղորդակցության միասնական քաղաքականություն պետական ողջ ապարատի համար, որը, օրինակ, պետական մարմինների կողմից հաղորդակցության պլանի մշակման կամ քաղաքականությունների ու բարեփոխումների վերաբերյալ կանոնավոր նախաձեռնողական հաղորդակցության պահանջ կսահմաներ: Պետության կողմից հաղորդակցությունը հիմնականում տեղի էր ունենում ըստ կարիքի (ad-hoc)՝ կախված լինելով անհատ պաշտոնյաների և մամուլ քարտուղարների ակտիվությունից, առանց բոլոր գերատեսչությունների համար նախատեսված ստանդարտ կառուցակարգերի: Հանձնառությունը նախատեսում է հանրության հետ պետության հաղորդակցությունը կարգավորող իրավական ակտերի մշակում, ինչպես նաև ՀՀ վարչապետի աշխատակազմում հատուկ ստորաբաժանման ստեղծում՝ պետական նախաձեռնություններում ավելի համակարգված հանրային մասնակցությանը աջակցելու նպատակով:

Նախնական արդյունքներ՝ զգալի արդյունքներ

Վարչապետի աշխատակազմը փորձագիտական խմբի և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ մշակել է ռազմավարական հաղորդակցության հայեցակարգ, որը մատնանշում է ոլորտի հիմնական խնդիրները, սահմանում է հաղորդակցության ճարտարապետության հիմնական սկզբունքները և ռազմավարական հաղորդակցության ինստիտուցիոնալ մոդել է առաջարկում կառավարության կառուցվածքում: Հայեցակարգը հիմնված է միջազգային փորձի վերլուծության վրա և քննարկվել է շահագրգիռ կողմերի, ներառյալ՝ մեդիա ներկայացուցիչների, ՔՀԿ-ների և պետական մարմիններում հաղորդակցության համար պատասխանատու ստորաբաժանումների հետ: Ըստ այս հայեցակարգի՝ վարչապետի աշխատակազմում պետք է ստեղծվի ռազմավարական հաղորդակցության կենտրոնացված ստորաբաժանում, որը պատասխանատու կլինի հաղորդակցության հետ կապված հաղորդակարգերը և ռազմավարությունները մշակելու, գնահատումներ ու վերլուծություններ, կարողությունների զարգացման ծրագրեր իրականացնելու, ինչպես նաև միջգերատեսչական համակարգումն ապահովելու համար³:

Եվրոպական միության (ԵՄ) ֆինանսավորմամբ իրականացվող «Աջակցություն ՀՀԳՀ-ի (Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի) մոնիտորինգին, իրականացմանը և հաղորդակցությանը» ծրագրի շրջանակում ներգրավված փորձագիտական խումբը մշակել է հաղորդակցության հաղորդակարգերի նախագծեր ինչպես ստանդարտ, այնպես էլ ճգնաժամային իրավիճակներում հաղորդակցության համար: Այս հաղորդակարգերը ներառում են նաև ապատեղեկատվության դեմ պայքարին ուղղված կարգավորումներ, ինչը այս հանձնառության կարևոր բաղադրիչ է հանդիսանում: Բացի այդ, նախատեսվում էր մշակել արտաքին հաղորդակցության հաղորդակարգեր⁴: Գործողությունների ծրագրի իրականացման ժամկետի ավարտի պահին այդ հաղորդակարգերը մշակված չէին, իսկ ռազմավարական հաղորդակցության ստորաբաժանումը դեռևս հայեցակարգային փուլում էր: ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ Քեմոնիքս կազմակերպության կողմից իրականացվող «Ռազմավարական հաղորդակցության աջակցության ծրագիրը» նույնպես աջակցություն էր ցուցաբերում կառավարությանը

ռազմավարական հաղորդակցության կառուցակարգերի ներդրման և հաղորդակարգերի փորձարկման նպատակով անցումային ծրագիր մշակելու հարցում: Անցումային ծրագրի նպատակն է նպաստել ռազմավարական հաղորդակցության կենտրոնացված ստորաբաժանման ստեղծմանը և համապատասխան գործառնությունների ներդրմանը պետական մարմիններում, իսկ կարգերի սիմուլյացիոն փորձարկումն ուղղված է առաջարկվող գործընթացների թեստավորմանը և կատարելագործմանը⁵: Մակայն 2025 թվականի փետրվարի սկզբին ծրագիրը դադարեցվեց՝ ԱՄՆ կառավարության կողմից արտաքին աջակցության կասեցման պատճառով⁶:

Կառավարությունը շարունակում է հանրային հաղորդակցության ոլորտում լուրջ մարտահրավերների բախվել, ներառյալ՝ տեղեկատվական հոսքերի մասնատվածությունը, ուղերձների հակասականությունը և հաղորդակցության հարցերում անհատ պաշտոնյաներից չափազանց մեծ կախվածությունը: Քաղաքացիական հասարակության մի ներկայացուցիչ նշել է, որ կառավարության հաղորդակցությունը խոշոր բարեփոխումների շուրջ շարունակում է անհամարժեք լինել, ինչի վկայությունն են եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգի և Երևանի հասարակական տրանսպորտում տոմսային համակարգի ներդրմանը հաջորդած բացասական հանրային արձագանքները⁷: Միևնույն ժամանակ, կառավարությունը ավելի լավ է գիտակցում ռազմավարական հաղորդակցության անհրաժեշտությունը և կոնսենսուսի է հասել բարեփոխումների ուղղության շուրջ: Հանձնառության երկարաժամկետ տեսլականի իրագործման համար լրացուցիչ ջանքեր, կարողություններ և ռեսուրսներ կպահանջվեն: Բարձր մակարդակի փորձագիտության, արհեստավարժ մարդկային ռեսուրսների, ինչպես նաև թվային լուծումների համար ֆինանսավորման պակասի պատճառով գործողությունների իրականացումը դեռևս դանդաղ է ընթանում, ինչն էլ ավելի խնդրահարույց կարող է դառնալ՝ հաշվի առնելով ԱՄՆ կառավարության կողմից արտաքին աջակցության կասեցումը:

Գործողությունների վերանայված ծրագրի միջանկյալ թիրախներից է նաև մասնակցային կառավարման գործընթացների մշտադիտարկման և սպասարկման համար ինստիտուցիոնալ մեխանիզմի ձևավորումը: Այս գործողությունն իրագործվել է ՀՀ վարչապետի 2024 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ, ըստ որի վարչապետի աշխատակազմում ստեղծվել է Մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչությունը: Վարչությունը պատասխանատու է մասնակցային կառավարման կառուցակարգերի մշակման, այդ գործընթացների մշտադիտարկման և գնահատման, բաց կառավարման ծրագրերի իրականացման և համագործակցության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպություններին առնչվող խնդիրների լուծման աջակցության համար⁸:

Այս հանձնառության նախնական արդյունքները ԱՀՄ-ն գնահատում է «զգալի»՝ հաշվի առնելով Մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչության ստեղծումը: Այս վարչությունը կարևոր քայլ է բաց և մասնակցային կառավարման ջանքերն ինստիտուցիոնալացնելու ուղղությամբ: Հանձնառության համար նպաստավոր դեր են ունեցել հանրային հաղորդակցությունն ու մասնակցային կառավարումը բարելավելու ուղղությամբ վարչապետի աշխատակազմի հետևողական աշխատանքը, ԲԿԳ աջակցող ստորաբաժանման առաջարկները մասնակցային կառավարումը ռազմավարական հաղորդակցության հետ համատեղ դիտարկելու վերաբերյալ, ինչպես նաև ներդաշնակեցումը Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության և միջազգային լավագույն

փորձի հետ: ԱՅՄ արդյունքների զեկույցի կազմման պահին վարչությունը դեռևս գործունեության վաղ փուլում էր:

Հետագա գործողությունները

Թեև պետության հանրային հաղորդակցության բարելավման ուղղությամբ կարևոր քայլեր են ձեռնարկվել, առանցքային ընթացակարգային փոփոխություններն ու ինստիտուցիոնալ կառուցակարգերը դեռևս մշակման փուլում են: Միևնույն ժամանակ, այս հանձնառությունը հիմք է ստեղծում ռազմավարական հաղորդակցության և մասնակցային կառավարման հետագա բարեփոխումների համար: Եթե այս բարեփոխումները կայուն լինեն և ապահովված լինեն համապատասխան ռեսուրսներով, ապա կկարողանան նպաստել թափանցիկության բարելավմանը, ամրապնդել կառավարության նկատմամբ հանրային վստահությունը և խթանել քաղաքացիների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում:

Շոշափելի և կայուն արդյունքների հասնելու համար առաջարկվում են հետևյալ քայլերը.

- **Վերջնական տեսքի բերել և կիրարկել հաղորդակցության ընթացակարգերը:** Կառավարությունը կարող է արագացնել հաղորդակարգերի ներդրումը հասցեագրելով հանրային հաղորդակցության խնդիրները: Փորձարկումներից և լրամշակումից հետո այս ուղեցույցները կարող են պարտադիր դառնալ բոլոր պետական մարմինների համար: Անհրաժեշտ է հստակ սահմանել պարտականությունները և վերահսկողության կառուցակարգերը՝ արդյունավետ իրագործումը երաշխավորելու համար:
- **Ստեղծել ռազմավարական հաղորդակցության ստորաբաժանում:** Ստորաբաժանումը պետք է բավարար ֆինանսական և մարդկային ռեսուրսներ ունենա և գործի քաղաքական ազդեցությունից անկախ, հատկապես 2026 թվականի ընտրություններին ընդառաջ: Միևնույն ժամանակ, այն պետք է ունենա բավարար լիազորություններ՝ միջգերատեսչական համակարգումն ապահովելու համար:
- **Ապահովել Մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչության թափանցիկ աշխատանքը և ամրապնդել հանրային մասնակցության կառուցակարգերը:** Վարչությունը պետք է որդեգրի թափանցիկ և հաշվետու ընթացակարգեր՝ բաց և խտրականությունից զերծ մոտեցում ապահովելով քաղաքացիական հասարակության ներգրավման հարցում և այդ նույն սկզբունքները կիրառելով նաև հանրային կառավարման բարեփոխումների գործընթացներում: Հանրային մասնակցությունը ընդլայնելու համար վարչությունը կարող է օգտագործել հաղորդակցության և տեղեկատվության տարածման տարբեր գործիքներ՝ մասնավորապես ուշադրություն դարձնելով խոցելի սոցիալական խմբերի և մարգային ներկայացուցիչների ներգրավմանը, որոնց մասնակցության հնարավորությունները սահմանափակ են: Բացի այդ, այն կարող է մշտադիտարկել պետական մարմինների գործունեության համապատասխանությունը մասնակցությանը վերաբերող կարգավորումներին՝ անհրաժեշտության դեպքում համապատասխան միջոցառումներ ձեռնարկելով, և ապահովել պետական մարմինների համար հանրային քննարկումների իրականացման հստակ մեթոդաբանությունը և տեխնիկական աջակցությունը:
- **Ուժեղացնել ճգնաժամային հաղորդակցությունն ու պայքարն ապաստեղեկատվության դեմ:** Կառավարությունը կարող է թյուր տեղեկատվությանը և

ապատեղեկատվությանը պետության կողմից արձագանքելու թափանցիկ միջոցներ սահմանել և հաստատել ճգնաժամային հաղորդակցության համակարգված հաղորդակարգեր (օրինակ՝ պարբերական մամուլի ասուլիսներ և փաստերի ստուգման նախաձեռնություններ):

Հանձնառություն 5. Մասնակցային բյուջետավորում տեղական մակարդակում

Պատասխանատու մարմին՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Համատեքստ և խնդիրներ

Սույն հանձնառության նպատակն էր խթանել հանրային հետաքրքրությունը բյուջետային գործընթացների նկատմամբ և ընդլայնել համայնքային ծրագրերում քաղաքացիների մասնակցության հնարավորությունները: Այն նախատեսում էր համայնքային բյուջեից որոշակի գումար հատկացնել քաղաքացիների կողմից առաջարկված և տեղական բնակչության քվեարկությամբ ընտրված ծրագրերի համար երեք պիլոտային համայնքներում՝ Աբովյանում, Արմավիրում և Աշտարակում: Պիլոտային համայնքներից մեկը՝ Արմավիրը, մասնակցային բյուջետավորման վերաբերյալ հանձնառություն էր ներառել նաև ԲԳԿ գործողությունների տեղական ծրագրում⁹:

Նախնական արդյունքներ՝ զգալի արդյունքներ

Հանձնառությունը գերազանցեց ի սկզբանե նախատեսված արդյունքները: Նախ երեք պիլոտային համայնքների շրջանակը ընդլայնվեց՝ ներառելով չորրորդ համայնքը՝ Ջերմուկը, որը նա միացավ փորձնական իրականացման գործընթացին: Այս մասնակցային բյուջետավորման նախաձեռնությանը միացան Հայաստանի 71 համայնքից 21-ը, որոնք պետական բյուջեից աջակցություն ստացան:

2023 թվականին պիլոտային չորս համայնքները՝ Աբովյանը, Արմավիրը, Աշտարակը և Ջերմուկը, համայնքային բյուջեից 2-ից 10 միլիոն դրամ (5000-ից 25000 ԱՄՆ դոլար) հատկացրեցին քաղաքացիների կողմից առաջարկված ծրագրերի համար: Արժեքավորելով այս նախաձեռնության հաջողությունը՝ կառավարությունը սուբվենցիոն ֆինանսավորման մեխանիզմներ դրեց՝ 2024 թվականին այս չորս համայնքներին տրամադրելով 500 միլիոն դրամ (մոտավորապես 1250000 ԱՄՆ դոլար)՝ մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրեր իրականացնելու նպատակով¹⁰: 2024 թվականին նախաձեռնությանը միացավ նաև 17 համայնք՝ համայնքային բյուջեից 2-ից 20 միլիոն դրամ (5000-ից 50000 ԱՄՆ դոլար) հատկացնելով և ակնկալելով սուբվենցիոն ծրագրերի միջոցով լրացուցիչ ֆինանսավորում ստանալ հետագայում¹¹: Գործողությունների ծրագրի իրականացման ժամկետի ավարտից հետո՝ 2025 թվականի փետրվարին ընդունված՝ կառավարության որոշման փոփոխությունների համաձայն 2025 թվականին արդեն 21 համայնք (4 պիլոտային համայնքները և այն 17 համայնքները, որոնք 2024 թվականին կամավոր կերպով միացան գործընթացին) կարող են օգտվել սուբվենցիոն ֆինանսավորումից, որի համար «2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն հատկացվել է 1 միլիարդ դրամ (2500000 ԱՄՆ դոլար)¹²: Ֆինանսավորումը ստանալու համար համայնքները պետք է հետևեն սահմանված ընթացակարգերին և առնվազն 20 տոկոսի համաֆինանսավորում ապահովեն համայնքային բյուջեից:

Գերմանական միջազգային համագործակցության ընկերությունը (GIZ) աջակցել է այս հանձնառությանը «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» (GGLD) ծրագրի շրջանակում, որն աջակցություն է ցուցաբերում ՀՀ կառավարությանը վարչատարածքային բարեփոխումների, ինչպես նաև համայնքների կարողությունների զարգացման գործում¹³: Այս աջակցությունը, որը տրամադրվում է 2014 թվականից ի վեր, ներառել է խոշորացված համայնքներում Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) ներդրումը և դրա շարունակական զարգացումը, առանձին համայնքների համար պարզեցված բյուջեների կազմման աջակցությունը, ինչպես նաև 2020 թվականին «Մասնակցային բյուջետավորման ձեռնարկի» հրապարակումը, որը հետագայում պարբերաբար վերանայվել է¹⁴: Այս ջանքերը կուռ հիմք են ապահովել սույն հանձնառության իրագործման համար:

2024 թվականի դեկտեմբերին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ) հրապարակեց GGLD ծրագրի աջակցությամբ մշակված մասնակցային բյուջետավորման մեթոդաբանական ուղեցույցը¹⁵: GGLD ծրագրի շրջանակում համայնքային տեղեկատվական համակարգերի մշակումն ու սպասարկումն իրականացնող Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն (ՏՀԶՎԿ) հասարակական կազմակերպությունը մշակել է համայնքային կայքերի մասնակցային բյուջետավորման հարթակը և շարունակաբար բարելավել է համայնքային կայքերը՝ դրանք առցանց քվեարկության համար հարմարավետ դարձնելու նպատակով, ինչպես նաև վերապատրաստել է համայնքային ծառայողներին տեղեկատվական համակարգերի օգտագործման հարցում: Առանց նույնականացման քարտի՝ միայն անձնագրային տվյալների միջոցով քաղաքացիների նույնականացումը հնարավոր դարձնելու համար ՏՀԶՎԿ-ն (GGLD ծրագրի աջակցությամբ) 2024 թվականի ավարտին ինքնաշխատ նույնականացման համակարգ ներդրեց¹⁶: ՏԿԵՆ-ը աշխատանքային խումբ է ձևավորել Ֆինանսների նախարարության, GIZ-ի, ՔՀԿ-ների, միջազգային կազմակերպությունների և համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ ընթացիկ խնդիրներ քննարկելու ու նախաձեռնությունն իրականացնող համայնքներին աջակցելու համար:¹⁷

Հանձնառությունը նպաստել է քաղաքացիների, հատկապես երիտասարդների ներգրավվածության աճին, որոնք ակտիվ մասնակցություն են ունեցել իրազեկման արշավներին և քննարկումներին: Այն բարելավել է տեղական բյուջետավորման գործընթացների, այդ թվում՝ սուբվենցիաների և ծրագրային ծախսերի մասին քաղաքացիների պատկերացումները: Թեև դեռ վաղ է խոսել լայնամասշտաբ մշակութային փոփոխության մասին, մասնակցային բյուջետավորման գործընթացում մասնակցության ցուցանիշների աճը հանրային հետաքրքրության ավելացման մասին է վկայում: Դեռևս պահպանվում է հանրության մեջ առկա թերահավատությունը, որը պայմանավորված է պետության նկատմամբ պատմականորեն ձևավորված անվստահությամբ, հանրային իրազեկվածության ցածր մակարդակով և որոշակի տեխնիկական խոչընդոտներով, օրինակ՝ առցանց քվեարկության համար գրանցումը¹⁸: Այնուամենայնիվ, տեսանելի արդյունքները, օրինակ՝ նոր խաղահրապարակները, վերանորոգված այգիները, մշակութային և երիտասարդական ակումբները, ավելի ակնառու են դարձրել քաղաքացիների մասնակցության ազդեցությունը՝ խրախուսելով նրանց ակտիվորեն մասնակցել հետագա փուլերին¹⁹: Մի շարք համայնքներում մասնակցային բյուջետավորման նախաձեռնության շրջանակում բացի հաղթող ծրագրերից իրականացվել են նաև լրացուցիչ ծրագրեր, որոնցից

մի քանիսը համաֆինանսավորվել են Գերմանիայի և Շվեյցարիայի կառավարությունների, տեղական ՔՀԿ-ների և ընկերությունների կողմից²⁰: ՔՀԿ-ների ներկայացուցիչներն ընդգծում են, որ թեև մասնակցային հնարավորություններն օրենսդրորեն նախատեսված են, այս նախաձեռնությունը օգնել է դրանք վերածել իրական գործելակերպի: Բացի այդ, մասնակցային բյուջետավորման գործընթացը համայնքներից պահանջում է ձևավորել բազմաշահառու հանձնաժողովներ, որոնք հանդես են գալիս որպես մասնակցային բյուջետավորման գործընթացի հիմնական ղեկավար մարմիններ: Այդ հանձնաժողովները սահմանված չափանիշների հիման վրա կատարում են առաջարկվող ծրագրերի նախնական ֆիլտրումը, հրապարակում են ծրագրերին վերաբերող որոշումները, պատճառաբանություն են տրամադրում հեղինակներին մերժված առաջարկների վերաբերյալ և հանրային քննարկումներ են կազմակերպում ծրագրերի քվեարկության մեկնարկից առաջ: Առցանց քվեարկությունը թափանցիկ է, ինչը վստահություն է ներշնչում քաղաքացիներին առ այն, որ ծրագրերի բուն ընտրությունը հիմնված է հանրության նախապատվության, այլ ոչ թե համայնքապետարանի հայեցողության վրա:

Սկզբնական փուլում մասնակցության մակարդակը ցածր էր. 2023 թվականին որոշ ծրագրեր ընտրվել են ընդամենը հինգ ձայնով: Համայնքապետարանները չունեին հանրության իրազեկման ու ներգրավման կարողություն և երբեմն ապավինում էին համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին, որպեսզի վերջիններս առաջարկներ ու քվեներ բերեն²¹: Սակայն արդեն 2024 թվականին պիլոտային համայնքների հաղթող ծրագրերի մեծ մասի դեպքում ձայների թիվն անցել է հազարը, ինչը վկայում է իրազեկման արշավների հաջողության և 2023 թվականին իրականացված ծրագրերի մոտիվացնող ազդեցության մասին: GIZ-ի, ՔՀԿ-ների, ՏԿԵՆ-ի և Ֆինանսների նախարարության դերն առանցքային է եղել իրազեկման և տեխնիկական աջակցության տրամադրման գործում: 2024-2025 թվականների ընթացքում GIZ-ի GGLD ծրագրի շրջանակներում ՔՀԿ-ների կոնսորցիումը, որը ներառում էր Արմավիրի զարգացման կենտրոնը և ՀԿ կենտրոնը, իրազեկման աշխատանքներ իրականացրեց մասնակցային բյուջետավորում իրականացնող բոլոր 21 համայնքներում: Որպես մեկ այլ մարտահրավեր է նշվել այն, որ մասնակցային բյուջետավորման հանձնաժողովները կարողությունների պակասի պատճառով կարող են ծրագրերը ֆիլտրել ոչ միայն ըստ համապատասխանության նախասահմանված չափանիշների, այլև համայնքի ենթադրյալ առաջնահերթությունների հիման վրա: Որոշ դեպքերում ծրագրային առաջարկների թյուրըմբռնումը հանգեցրել է հանձնաժողովների կողմից հայեցողական որոշումների ընդունմանը: Այս դեպքերը կարող են մտահոգություններ առաջացնել համայնքապետարանի հնարավոր կողմնակալության վերաբերյալ, երբ նախապատվությունը կարող է տրվել աշխատակազմի նախաձեռնությամբ մշակված, ոչ թե քաղաքացիների առաջարկված ծրագրերին²²:

Պետական սուբվենցիա ստանալու համար մասնակցային բյուջետավորման ծրագրերը պետք է համապատասխանեն կառավարության հնգամյա ծրագրի, համայնքի զարգացման ծրագրի և ռազմավարական փաստաթղթերի նպատակներին: Թեև սրանք խելամիտ չափանիշներ են, սակայն թույլ են տալիս հայեցողական մեկնաբանություններ անել՝ տեսականորեն սահմանափակելով քաղաքացիների կողմից ներկայացված նախաձեռնությունները: Եթե հանրային քվեարկությամբ հավանության արժանացած ծրագրերը հետագայում կառավարության ուսումնասիրման արդյունքում որակազրկվեն, ապա սա կարող է թուլացնել հանրային վստահությունը, ինչը մասնակցային կառավարման կենսական

բաղադրիչ է: Կառավարության որոշմամբ նաև սահմանվում է, որ նախաձեռնությունները պետք է նպաստեն համայնքների սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանը: Կառավարության ներկայացուցիչները պարզաբանեցին, որ այս պահանջը ենթադրում է շինարարական ծրագրեր՝ 2006 թվականից կառավարության կողմից ֆինանսավորվող ավանդական համայնքային սուբվենցիոն ծրագրերի համանմանությամբ²³: Մասնակցային բյուջետավորման նախաձեռնությունները շինարարական ծրագրերով սահմանափակելը նշանակում է, որ համայնքները չեն կարողանա մասնակցային բյուջետավորման միջոցներն օգտագործել հրատապ տեղական խնդիրների լուծման համար անհրաժեշտ գնումների, ծառայությունների կամ այլ նախաձեռնությունների համար: Հարցազրույցների մասնակիցներն իրենց մտահոգությունն են արտահայտել նաև մասնակցային բյուջետավորման գործընթացների և ծրագրերի իրականացման համար 2025 թվականի փետրվարի կառավարության որոշմամբ սահմանված սեղմ ժամանակացույցի վերաբերյալ²⁴: Ծրագրային առաջարկների ներկայացման և քվեարկության կարճ ժամկետները կարող են սահմանափակել հանրային մասնակցությունը և իրական մասնակցության հնարավորության փոխարեն գործընթացը ձևականության վերածելու վտանգ ստեղծել: Այնուամենայնիվ, կառավարության նշանակալի ֆինանսական ներդրումը արտացոլում է տեղական և ազգային իշխանությունների միջև համագործակցության ընդլայնումը, համայնքային մակարդակում կարողությունների աճը և շահագրգիռ կողմերի միջև վստահության ամրապնդումը:

Հետագա գործողությունները

Այս հանձնառությունը ներդրել է մասնակցության նոր գործիքներ և նպաստել տեղական ինքնակառավարման մարմինների թափանցիկության ու հաշվետվողականության բարելավմանը: Այն հիմք է ստեղծել մյուս համայնքների կողմից նմանատիպ գործելակերպ որդեգրելու համար, իսկ սուբվենցիաների տրամադրումը հզոր խթան է դարձել մասնակցային բյուջետավորման գործընթացում նոր համայնքներ ներգրավելու համար: Հայաստանում մասնակցային բյուջետավորման երկարաժամկետ հաջողությունը կախված կլինի ֆինանսական հատկացումների ծածկույթի և ծավալի ավելացումից, ծրագրային առաջարկների նախնական ընտրության գործընթացի թափանցիկության ապահովումից, ինչպես նաև հանրային իրազեկման և մասնակցության խթանման ուղղությամբ համայնքապետարանների ու տեղական ՔՀԿ-ների կարողությունների զարգացումից: Հիմնվելով վերոնշյալ վերլուծության և շահագրգիռ կողմերի առաջարկությունների վրա, ԱՀՄ-ը խորհուրդ է տալիս հետևյալը.

- **Համապատասխան իրավական և քաղաքականության շրջանակների միջոցով ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնել մասնակցային բյուջետավորումը:** Մասնակցային բյուջետավորումը կարող է ամրագրվել Հայաստանի իրավական և քաղաքականության փաստաթղթերում՝ ապահովելով դրա շարունակականությունը գործողությունների ծրագրի ավարտից հետո՝ անկախ կառավարության առանձին որոշումներից և դոնորների աջակցությունից: Այս նպատակով հավանաբար հարկ է փոփոխություններ կատարել տեղական ինքնակառավարմանը վերաբերող համապատասխան օրենքներում՝ մասնակցային բյուջետավորումը որպես ամենօրյա գործելակերպ պարտադիր դարձնելով համայնքների համար: Հստակ իրավական դրույթներով կարելի է ամրագրել այնպիսի կարևոր տարրեր, ինչպիսիք են բյուջեի հատկացման պահանջները, տեղական իշխանությունների պարտականությունները և գործընթացում հանրային մասնակցության կառուցակարգերը: Սա կապահովի

մասնակցային գործելակերպի շարունակականությունը նաև քաղաքական փոփոխությունների դեպքում:

- Ապահովել ծրագրերի համապատասխանության գնահատման հստակ և ներառական չափանիշներ:** Հայեցողական որոշումների և ծրագրերի անհիմն ֆիլտրման ռիսկը մեղմելու համար կառավարությունը կարող է լրամշակել և հստակեցնել մասնակցային բյուջետավորմամբ ֆինանսավորվող ծրագրերի համապատասխանության գնահատման չափանիշները: Այս չափանիշները պետք է հավասարակշռված լինեն՝ հնարավորություն ընձեռելով թե՛ ռազմավարական նպատակներին համահունչ և թե՛ տեղական հրատապ կարիքները հասցեագրող գաղափարների իրագործման համար: Ենթակառուցվածքային ծրագրերի հետ մեկտեղ շատ կարևոր է ավելի բազմազան նախաձեռնությունների, այդ թվում՝ ծառայությունների, գնումների և սոցիալական ծրագրերի իրականացման հնարավորության ընձեռումը: Համապատասխանության ստուգման հնարավոր չարաշահումները կանխելու համար կառավարությունը և քաղաքացիական հասարակությունը պետք է համագործակցեն համայնքների հետ՝ մշակելով հստակ ուղեցույցներ, որոնք կբացառեն ավելորդ սահմանափակումների կիրառումը՝ միաժամանակ հաշվետվողականություն ապահովելով: Այս ուղեցույցներում կարելի է ներառել մասնակցային բյուջետավորման ծրագրերի առաջարկների նախնական ընտրության նիստերը դռնբաց անցկացնելու պահանջը, որոնց ընթացքում ծրագրերի հեղինակներին հնարավորություն կտրվի պարզաբանել իրենց գաղափարները:²⁵
- Հանրային իրազեկման և կարողությունների զարգացման ընդլայնում և ամրապնդում:** Հանրային մասնակցությունը շարունակում է մարտահրավեր լինել, հատկապես այն համայնքներում, որտեղ քաղաքացիական ակտիվության մակարդակը ցածր է և ՔՀԿ-ներ չկան: Տեղական ՔՀԿ-ներին և համայնքապետարանների աշխատակազմին հարկ է վերապատրաստել տեղեկատվության տարածման արդյունավետ ռազմավարությունների և թվային հարթակների օգտագործման թեմաներով: Մասնակցության բարելավման նպատակով կարելի է հաղորդակցության բազմազան ուղիներով իրազեկման շարունակական արշավներ անցկացնել ինչպես ազգային, այնպես էլ տեղական մակարդակում: Այս արշավը կարող է ներառել մասնակցային բյուջետավորման գործընթացի, դրա ազդեցության և բնակիչների մասնակցության ձևերի մասին հանրության իրազեկումը: Սոցիալական ցանցերով կամ այլ թվային հարթակներով տեղեկատվության տարածումից զատ համայնքապետարանները կարող են դեմառդեմ քննարկումներ կազմակերպել ավելի լայն մասնակցություն ապահովելու համար, հատկապես դպրոցներում, համայնքային հիմնարկներում, բուհերում և բացօթյա հանրային տարածքներում: Պիլոտային համայնքներում այս մոտեցումներն արդյունավետ են եղել²⁶: Բացի այդ, համայնքապետարաններին հարկավոր է շարունակական աջակցություն տրամադրել՝ մասնակցային բյուջետավորման գործընթացը կազմակերպելու, քաղաքացիներին ներգրավելու և իրականացման թափանցիկությունն ապահովելու համար: Տեղեկատվության տարածմանը զուգահեռ՝ ծրագրային առաջարկների մշակման գործում փորձագիտական աջակցություն տրամադրելը կարող է ապահովել առաջարկների բարձր որակը, ձևակերպման հստակությունը և համապատասխանությունը համայնքի կարիքներին²⁷: Սա կարելի է իրականացնել ծրագրային առաջարկների ներկայացման

փուլում երիտասարդների և համայնքի այլ ակտիվ անդամների հետ աշխատարանների միջոցով՝ նրանց անհրաժեշտ հմտություններ և ուղղորդում տրամադրելով ազդեցիկ ծրագրային գաղափարների մշակման նպատակով: Դոնորներից կախվածությունը նվազեցնելու և մասնակցային բյուջետավորման երկարաժամկետ կայունությունն ապահովելու նպատակով կառավարությունը կարող է դրամաշնորհային միջոցներ հատկացնել տեղական ՔՀԿ-ներին՝ իրազեկման, կարողությունների զարգացման և տեղեկատվության տարածման գործողություններին աջակցելու համար²⁸:

- **Մասնակցային բյուջետավորման գործընթացում որոշումների ընդունման թափանցիկության և հաշվետվողականության բարելավում:** Մասնակցային բյուջետավորման նկատմամբ հանրային վստահությունը հիմնվում է որոշումների կայացման թափանցիկության և հստակ հաղորդակցության վրա: Համայնքները կարող են հրապարակել բոլոր ծրագրային առաջարկների վերաբերյալ տեղեկությունները, սահմանված չափանիշներին դրանց համապատասխանության մասին որոշումները, քվեարկության արդյունքները և ծրագրերի իրականացման ընթացքը՝ ըստ ուղեցույցում սահմանված պահանջների: Բոլոր առաջարկների հրապարակումը՝ պահանջներին չհամապատասխանելու դեպքում հստակ պատճառաբանության հրապարակային ներկայացմամբ, գործընթացն ավելի վստահարժան կդարձնի: Մասնակցային բյուջետավորման արդյունքների կանոնավոր մշտադիտարկումն ու դրանց վերաբերյալ հաշվետվողականությունը կօգնեն ի ցույց դնել դրա ազդեցությունը: Անկախ մշտադիտարկման մեխանիզմները, օրինակ՝ քաղաքացիական հասարակության վերահսկող հանձնաժողովները, կարող են բարձրացնել հաշվետվողականության մակարդակը և կանխել գործընթացում հնարավոր չարաշահումները:

Հանձնառություն 7. Հանրային ծառայողների նվերների ռեեստր

Պատասխանատու մարմիններ՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, Արդարադատության նախարարություն

Համատեքստ և խնդիրներ

Ըստ «Հանրային ծառայության մասին» օրենքի՝ արգելվում է հանրային ծառայողների կողմից իրենց պաշտոնական լիազորությունների կատարման ընթացքում նվերներ ընդունելը՝ որոշ բացառություններով, ինչպես օրինակ՝ պաշտոնական այցերի կամ հանրային միջոցառումների ժամանակ ընծայված նվերները, արարողակարգային նվերները, դրամաշնորհները և կրթաթոշակները: Օրենքի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են ստացած նվերները փոխանցել պետությանը կամ համայնքին, եթե դրանց արժեքը գերազանցում է 60000 դրամը (մոտ 150 ԱՄՆ դոլար): Յոթերորդ հանձնառության նպատակն էր ապահովել նվերներին վերաբերող իրավակարգավորումների կիրառումը, բարելավել հանրային ծառայության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը և ապահովել հակակոռուպցիոն ոլորտում միջազգային հանձնարարականների կատարումը: Հիմնական գործողությունները ներառում են նվերների հաշվառման և փոխանցման կանոնակարգերի ընդունումը և հանրամատչելի առցանց ռեեստրի ստեղծումը, որը հնարավորություն կտա քաղաքացիներին մշտադիտարկել և ազդարարել անթույլատրելի նվերները: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ)

վերահսկելու է ռեեստրը և անհրաժեշտության դեպքում՝ այդ թվում խախտումների մասին հանրության հաղորդումների հիման վրա, վարույթներ է նախաձեռնելու՝ կիրառելով օրենքով նախատեսված կարգապահական և վարչական տույժեր կամ հանցագործության դեպքում գործը ուղարկելով իրավապահ մարմիններին²⁹:

Նախնական արդյունքներ՝ չափավոր արդյունքներ

Հանձնառության ամենանշանակալի ձեռքբերումը նվերների հաշվառումը կազմակերպելու համար միջազգային հակակոռուպցիոն չափանիշներին համապատասխանող իրավական շրջանակի ձևավորումն է: Սակայն էլեկտրոնային հանրամատչելի ռեեստրը դեռևս առկա չէ: Թեև մի շարք պաշտոնատար անձանց կողմից նվերների հայտարարագրման պահանջների կատարման տեսանկյունից բարելավում է արձանագրվել, դեռևս բազմաթիվ մարտահրավերներ կան, ներառյալ նվերների հետ կապված սահմանափակումների թերի ընկալումը, գործող ռեեստրի սահմանափակ օգտագործելիությունը և պաշտոնեական պարտականությունների հետ չառնչվող նվերների հաշվառման պահանջի բացակայությունը:

Առաջին գործողության ներքո կառավարությունը իրավական հիմքեր է ստեղծել նվերների հաշվառումն ու հայտարարագրումը կարգավորելու համար: Ըստ 2022 թվականի դեկտեմբերին ընդունված՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի փոփոխությունների՝ պաշտոնատար անձինք ու հանրային ծառայողները պետք է հաշվառեն թույլատրելի նվերները, եթե դրանց արժեքը գերազանցում է 40000 ՀՀ դրամը (մոտ 100 ԱՄՆ դոլար): Այս փոփոխություններով ձևավորվել են նաև նվերի արժեքի գնահատման, ազդարարման և վերահսկողության մեխանիզմները, իսկ ԿԿՀ-ն սահմանվել է որպես նվերների հաշվառման գործընթացի լիազոր մարմին³⁰: Ի լրումն, 2023 թվականի դեկտեմբերին և 2024 թվականի ապրիլին ընդունված իրավական կարգավորումները սահմանում են նվերների հաշվառման և կառավարման, ինչպես նաև ներքին ազդարարման ընթացակարգերը³¹: Ըստ ընդունված կարգավորումների՝ սահմանված արժեքից բարձր նվերները հանձնվում են Պետական գույքի կառավարման կոմիտեին (համայնքային ծառայողների դեպքում՝ տեղական ինքնակառավարման մարմին) և դառնում են պետական (կամ համայնքային) սեփականություն: Թույլատրելի չհամարվող նվերները նույնպես պետք է փոխանցվեն պետությանը, եթե դրանք հնարավոր չէ վերադարձնել կամ համարժեք հատուցում վճարել սահմանված ժամկետում: 2024 թվականի հունիսին կառավարությունը ընդունեց նվերների փոխանցման ընթացակարգերի ենթաօրենսդրական կարգավորումները՝ այդպիսով ավարտին հասցնելով նվերների հաշվառման և փոխանցման իրավական հիմքերի ձևավորումը: Նվերների գրանցման և հանձնման կանոններն ուժի մեջ մտան 2024 թվականի օգոստոսին: ՔՀԿ-ներն ակտիվորեն մասնակցել են օրենսդրական գործընթացին՝ բարեփոխումներին իրենց ներդրումն ունենալով հետազոտությունների և քաղաքականության առաջարկների միջոցով³²: ԵՄ և ԲԿԳ ֆինանսավորմամբ իրականացվող «ԲԿԳ ազգային գործողությունների ծրագրի բաց արդարադատության և հակակոռուպցիոն հանձնառությունների բազմակողմանի իրականացում» ծրագրի շրջանակում Իրավաբանների հայկական ասոցիացիան փորձագիտական քննարկումներ կազմակերպեց և պատրաստեց միջազգային լավագույն փորձի երկու վերլուծություն: Դրանցում ներկայացված բազմաթիվ առաջարկություններ հաշվի են առնվել նոր կարգավորումներում³³: Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբը (ԳԲԵԿՈ) դրական արձագանք է տվել օրենսդրական փոփոխություններին և նվերների վերաբերյալ կանոնների հստակեցման, նվերների հաշվառման ընթացակարգերի և իրազեկման ուղղությամբ ձեռնարկված քայլերին՝ բարձր

գնահատելով Հայաստանի առաջընթացը հակակոռուպցիոն ոլորտի համապատասխան հանձնարարականների կատարման գործում³⁴:

ԿԿՀ-ն մշակել է նվերների ռեեստրի տեխնիկական բնութագիրը: Սակայն գործողությունների ծրագրի իրականացման ժամկետի ավարտի պահին հարթակը դեռևս պատրաստ չէր: 2024 թվականի նոյեմբերին ԿԿՀ-ն ստորագրել է ծրագրային ապահովման պայմանագիրը, և համակարգի նախագծման աշխատանքների ավարտից հետո կապալառուն սկսել է համակարգի մշակումը³⁵: Հարթակի ստեղծմանն աջակցություն է ցուցաբերել ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Հայաստանի բարեվարքություն» ծրագիրը: Սակայն 2025 թվականի հունվարին ԱՄՆ-ի կողմից օտարերկրյա աջակցությունը կասեցնելու պատճառով հարթակի մշակումը հավանաբար կուշանա՝ մինչև այլընտրանքային ֆինանսավորման հայթայթումը: Քանի դեռ հարթակը չի գործում, ԿԿՀ-ն իր կայքում հրապարակել է նվերների հայտարարագրման մի ձևաթուղթ և ուղեցույց, ըստ որի պաշտոնատար անձինք նվերների հայտարարագրերը պետք է ԿԿՀ-ին ուղարկեն էլեկտրոնային փոստով³⁶: 2024 թվականի սեպտեմբերից սկսած նվերների հայտարարագրերը հրապարակվում են Google Drive թղթապանակում³⁷:

ԿԿՀ-ն հանրային ծառայողների համար կազմակերպել է դասընթացներ և տրամադրել է խորհրդատվություն՝ նվերների ընդունման սահմանափակումների և համապատասխան պահանջների վերաբերյալ: Հանձնաժողովն ավելի ու ավելի հաճախ է զանգեր ստանում՝ նվերների ընդունման և հաշվառման ընթացակարգերի հետ կապված հարցերի վերաբերյալ և պլանավորում է այս թեման ներառել հանրային ծառայողների բարեվարքության վերաբերյալ էլեկտրոնային ուսուցման մոդուլում (ակնկալվում է, որ հանրային ծառայողների էլեկտրոնային ուսուցման հարթակը կգործարկվի 2025 թվականի մայիսին)³⁸: 2024 թվականի հունիսին հրապարակվել է նվերների թույլատրելիության վերաբերյալ խորհրդատվության տրամադրման մեթոդական ուղեցույցը³⁹: Բացի այդ, ԿԿՀ-ն նախատեսում է հանրային ծառայողների և հանրության շրջանում լայնածավալ իրազեկման նպատակով տեսանյութեր պատրաստել⁴⁰:

ԱՀՄ-ն հանձնառության նախնական արդյունքները գնահատել է «չափավոր»: Նախքան հանձնառությունը նվերների հայտարարագրման համակարգ չկար, ինչը սահմանափակում էր նվերների վերաբերյալ կարգավորումների կիրարկման վերահսկողությունը: Հանձնառության ներքո հստակ կարգավորումներ սահմանվեցին պաշտոնեական պարտականությունների առնչությամբ ստացած նվերների վերաբերյալ՝ նպաստելով նվերների հետ կապված սահմանափակումների հստակեցմանը և թույլ տալով ԿԿՀ-ին ու հանրությանն ավելի լավ հետևել պահանջների կատարմանը: Այս կարգավորումները կարող են նաև կանխարգելիչ դեր ունենալ, քանի որ հանրային ծառայողներն ավելի զգուշավոր են թույլատրելի չհամարվող նվերներ ընդունելու հարցում: Այնուամենայնիվ, լիարժեք գործող թվային ռեեստրի բացակայության պայմաններում դեռևս հնարավոր չէ հասնել թափանցիկության և հանրային վերահսկողության մակարդակի ակնկալվող աճին: Բացի այդ, կարգավորումների կիրարկումը թերի է մնում: Պաշտոնյաների կողմից նվերների հայտարարագրման կանոնների պահպանումը հիմնականում նրանց բարոյական պատասխանատվության վրա է խարսխված, քանի որ ԿԿՀ-ն և բարեվարքության հարցերով պատասխանատու ծառայողները կանոնների պահպանումը մշտադիտարկելու սահմանափակ հնարավորություն ունեն: Ի նշան երախտագիտության նվերներ տալու մշակույթը շարունակում է խոչընդոտել կարգավորումների կիրարկմանը, իսկ ազդարարման

մեխանիզմները բավարար չափով չեն օգտագործվում՝ սոցիալական խարանի պատճառով⁴¹։ Մեկ այլ խնդիր է նվերների վերաբերյալ խորհրդատվության տրամադրման համար պատասխանատու բարեվարքության հարցերով կազմակերպիչների կարողությունների պակասը։ Բարեվարքության հարցերով կազմակերպիչները հաճախ մարդկային ռեսուրսների բաժնի ծանրաբեռնված աշխատակիցներն են, որոնք հակակոռուպցիոն կարգավորումների վերաբերյալ բավարար փորձագիտություն չունեն⁴²։ Արդյունքում վերապատրաստումների և խորհրդատվության բեռի մեծ մասն ընկնում է ԿԿՀ-ի վրա, որը նույնպես աշխատուժի պակաս ունի։

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները գնահատում են իրավական կարգավորումներում արված դրական փոփոխությունները և թափանցիկության բարելավումը, մասնավորապես թույլատրելի նվերների մասով։ Սակայն հետաքննող լրագրողները և հակակոռուպցիոն ոլորտի փորձագետները մտահոգված են, որ բարձրարժեք նվերները կարող են այնուամենայնիվ չհայտարարագրվել, եթե դասակարգվեն որպես «անձնական» և այդպիսով դուրս մնան հաշվառման պահանջի շրջանակներից։ Բացի այդ, ներկայիս ռեեստրը ներառում է միայն թույլատրելի նվերները, իսկ թույլատրելի չհամարվող և վերադարձված կամ պետությանը հանձնված նվերների վերաբերյալ տեղեկությունները գրանցամատյանից դուրս են մնում, ինչը նվազեցնում է վերահսկողության հնարավորությունները⁴³։ Անգամ թույլատրելի նվերների դեպքում ռեեստրում տեղեկատվություն չկա այն մասին, թե ինչպես են տնօրինել նվերները Պետական գույքի կոմիտեին կամ տեղական ինքնակառավարման մարմինն փոխանցելուց հետո (արդյո՞ք դրանք պահպանվել են պետական մարմնում, վաճառվել, նվիրաբերվել կամ այլ կերպ տնօրինվել), քանի որ այս տեղեկությունները դուրս են ԿԿՀ-ի իրավասության շրջանակից։ Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից մեկն ընդգծեց նաև նվերների արժեքի գնահատման հարցում առկա խնդիրները։ Չնայած գնահատման գործընթացի կարգավորման նպատակով իրականացված ընթացակարգային փոփոխություններին՝ գրանցվել են նվերի արժեքի ոչ հավաստի գնահատման դեպքեր, ինչը հարցականի տակ է դնում նվերների կարգավորման և գնահատման ընթացակարգերի վստահարժանությունը⁴⁴։ ԿԿՀ ներկայացուցիչը նշել է, որ թափանցիկությունն ու հաշվետվողականությունը նվերների հաշվառման առաջնային նպատակներն են, բայց ձեռագործ հուշանվերների կամ շուկայական գնահատված արժեք չունեցող առարկաների համար թանկարժեք փորձագիտական գնահատումներ իրականացնելը կարող է ֆինանսապես անարդյունավետ լինել⁴⁵։

Հետագա գործողությունները

Հայաստանը ներկայացրել է նվերների ռեեստրը որպես «Բաց կառավարման մարտահրավեր»՝ առաջարկելով ստեղծել թվային այնպիսի ռեեստր, որը արհեստական բանականության հիմքով գնահատման և ստուգման լուծումներ կներառի⁴⁶։ Հետագա քայլերը պետք է կենտրոնանան ռեեստրի լիարժեք գործարկման, իրազեկման և հանրային վերահսկողության ուժեղացման, ինչպես նաև նվերների սահմանափակումների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության մեխանիզմների վրա։ Այս խնդիրները լուծելով՝ Հայաստանը կարող է նվերների ռեեստրը դարձնել արդյունավետ հակակոռուպցիոն գործիք, որը կբարձրացնի թափանցիկության ու հանրային հաշվետվողականության մակարդակը։

Հետագայում ԱՀՄ-ը առաջարկում է ձեռնարկել հետևյալ քայլերը.

- **Առաջնահերթ դարձնել թվային ռեեստրի լիարժեք ներդրումը**՝ ներառելով տվյալների ստուգման և ահազանգի ազդակների («կարմիր դրոշակ») ինքնաշխատ գործիքներ, ապահովելով ռեեստրի թվային անվտանգությունը և փոխգործելիությունը գույքի և եկամուտների հայտարարագրերի առկա համակարգերի հետ, ինչը հնարավորություն կընձեռի պաշտոնյաների հայտարարագրած նվերների ինքնաշխատ ստուգման համար:
- **Ամրապնդել վերահսկողության մեխանիզմները և խախտումների դեպքում պատժամիջոցներ կիրառել**՝ պահանջների կիրարկումը խթանելու և խախտումները կանխելու նպատակով: Բարեվարքության պատասխանատուները պետք է լրացուցիչ վերապատրաստում անցնեն և ռեսուրսներ ունենան իրենց պարտականություններն ավելի արդյունավետ կերպով կատարելու համար:
- **Բարելավել պետությանը հանձնված նվերների թափանցիկությունը**՝ հրապարակելով ոչ թույլատրելի նվերների ստացման, տնօրինման և փոխանցումից հետո գտնվելու վայրի մանրամասները⁴⁷: Սա հնարավորություն կտա հանրային վերահսկողություն իրականացնել նաև հանձնմանը հաջորդող փուլերում և բարելավել պետական գույքի կառավարման հաշվետվողականությունը:
- **Ընդլայնել հաշվառվող նվերների շրջանակը**՝ ներառելով բոլոր այն նվերները, որոնց արժեքը գերազանցում է որոշակի շեմը, նույնիսկ եթե դրանք դասակարգվում են որպես «անձնական» (և կապված չեն պաշտոնական պարտականությունների կատարման հետ): Որպես այլընտրանք՝ այդ նվերները կարող են ներկայացվել գույքի և եկամուտների հայտարարագրերում՝ նվիրատուի տվյալների ներառմամբ⁴⁸: Սա կօգնի հետագծել թանկարժեք նվերների ծագումը և բացահայտել շահերի բախման հնարավոր դեպքերը:
- **Բարելավել հանրության իրազեկվածությունը**՝ փոխելով մշակութային ընկալումները նվերների սահմանափակումների և հայտարարագրման պահանջների վերաբերյալ, որը կարող է արվել հանրությանը շարունակաբար կրթելու միջոցով: Թեև վարչական և քրեական պատժամիջոցները ևս անհրաժեշտ են, երկարաժամկետ հաջողությունը կախված կլինի նվերներ ընդունելու նկատմամբ պետական պաշտոնյաների վերաբերմունքի փոփոխությունից:
- **Հստակ և գործնական ուղեցույցներ մշակել նվերների տեսակը գնահատելու համար**, ինչը կօգնի հանրային ծառայողներին տարբերակել թույլատրելի և արգելված նվերները: Ընդհանրական արգելքի փոխարեն վարքագծի կանոնների մեջ կարելի է ներառել քայլ առ քայլ ուղեցույց՝ նվերներին ներկայացվող պահանջներին համապատասխանության գնահատման համար⁴⁹: Պարզ և մատչելի կրթական նյութերը վերապատրաստման դասընթացների հետ համադրելով կարելի է ամրապնդել հանրային ծառայողների ընկալումը կարգավորումների և դրանց գործնական կիրառման վերաբերյալ⁵⁰:
- **Բարելավել ազդարարների պաշտպանության և հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմները**՝ խրախուսելով պաշտոնյաներին և հանրությանը հաղորդումներ տալ խախտումների մասին: Ազդարարման նկատմամբ մշակութային դիմադրությունը կարելի է հաղթահարել իրավական երաշխիքների և իրազեկման միջոցով:

³ Անժելա Կոդրյան (ՀՀ վարչապետի աշխատակազմ), էլեկտրոնային հաղորդակցություն և հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 27 հունվարի 2025թ.:

⁴ Կոդրյան, հարցազրույց:

⁵ Շուշան Դոդոյան (Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 21 հունվարի 2025թ., Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ, «75. ԱՄՆ ՄԶԳ ռազմավարական հաղորդակցության աջակցության ծրագիր» (25 փետրվարի 2025թ.), https://foi.am/completed_projects/36122:

⁶ Ջեյմի Ջեյ Ռոջերս (ԱՄՆ ՄԶԳ գնումների վարչության ղեկավար, Կառավարման բյուրո, Գնումների և աջակցության գրասենյակ), USAID's Implementation of the Funding Pause for Foreign Assistance Programs [«Օտարերկրյա աջակցության ծրագրերի ֆինանսավորման ժամանակավոր կասեցումն ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից իրականացնելու մասին»], (ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն, 28 հունվարի 2025թ.), <https://content.govdelivery.com/accounts/USAIDHQ/bulletins/3cf4d94>:

⁷ Սոնա Այվազյան (Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 6 փետրվարի 2025թ.:

⁸ ՀՀ վարչապետի N 1204-Լ որոշում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-Ի N 564-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ARLIS, 26 դեկտեմբերի 2024թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=201524>:

⁹ Բաց կառավարման գործընկերություն, Արմավիր, Հայաստան, Participatory budgeting implementation (AMAVR0002) [Մասնակցային բյուջետավորման իրականացում] (հասանելի է եղել 2025թ. ապրիլին), <https://www.opengovpartnership.org/members/armavir-armenia/commitments/AMAVR0002/>:

¹⁰ ՀՀ կառավարության որոշում N 1890-Ն «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՄԲ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ARLIS, 2 նոյեմբերի 2023թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=184645>:

¹¹ Աշոտ Գիլոյան (ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն), էլեկտրոնային հաղորդակցություն ԱՀՄ հետազոտողի հետ, 26 փետրվարի 2025թ.:

¹² ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի N 1890-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» [ARLIS, 20.02.2025թ.], <https://www.arlis.am/hy/acts/203408>, «ՀՀ ՕՐԵՆՔԸ ՀՀ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» [ARLIS, 04.12.2024թ.], <https://www.arlis.am/documentview.aspx?docID=200713>:

¹³ Ծրագիրը իրականացվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ) և Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) համաֆինանսավորմամբ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ սերտ համագործակցությամբ: Տե՛ս՝ «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» (Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն, հունիս 2025թ.), <https://www.giz.de/en/downloads/giz2025-en-factsheet-good-governance-for-local-development-in-armenia.pdf>:

¹⁴ GIZ, ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՄԲ ՁԵՆՆԱՐԳ, (2020թ.),

https://api.mtad.am/storage/pages/files/2022/03/pdf/02_9-15-sc319-62e15fda33353.pdf:

¹⁵ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ (2024թ.), https://mtad.am/pages/Participatory_budgeting:

¹⁶ Գրիշա Խաչատրյան (Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 27 փետրվարի 2025թ.:

¹⁷ Աշոտ Գիլոյան (ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 26 փետրվարի 2025թ.:

¹⁸ Անի Թովմասյան և Ազգանուշ Մնացականյան (Արմավիրի զարգացման կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 24 փետրվարի 2025թ., Արփինե Հակոբյան (ՀԿ կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի կողմից, 26 փետրվարի 2025թ., Լուսինե Ավալյան և Գալանե Նալբանդյան (GIZ Հայաստան), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի կողմից, 21 փետրվարի 2025թ., Նարեկ Բոցինյան («Առաջընթաց» երիտասարդական հասարակական կազմակերպություն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 21 փետրվարի 2025թ.:

¹⁹ Թովմասյան և Մնացականյան, հարցազրույց, Լիլյա Աֆրիկյան (ՀՀ վարչապետի աշխատակազմ), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 22 հունվարի 2025թ., Ավալյան և Նալբանդյան, հարցազրույց:

²⁰ Գիլոյան, էլեկտրոնային հաղորդակցություն:

²¹ Արփինե Հակոբյան, հարցազրույց:

²² Արփինե Հակոբյան, հարցազրույց:

²³ Գիլոյան, հարցազրույց, Ռուզաննա Գաբրիելյան (ՀՀ ֆինանսների նախարարություն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 12 փետրվարի 2025թ., ՀՀ կառավարության N1708-Ն որոշումը «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՍՈՒԲՎԵՆՅՈՒՄՆԵՐԻ ՏՐԱՄԱՂԻՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ», (16 նոյեմբերի 2006թ., փոփոխված է 23 մայիսի 2024թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=193133>:

²⁴ Գիլոյան, հարցազրույց, Հակոբյան, հարցազրույց, Ավալյան և Նալբանդյան, հարցազրույց:

²⁵ Հակոբյան, հարցազրույց:

²⁶ Թովմասյան և Մնացականյան, հարցազրույց, Բոցինյան, հարցազրույց:

²⁷ Հակոբյան, հարցազրույց:

²⁸ Թովմասյան և Մնացականյան, հարցազրույց, Ավալյան և Նալբանդյան, հարցազրույց:

²⁹ Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն անկախ պետական մարմին է, որը պատասխանատու է պետական պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի պահպանման և վերլուծության, էթիկական հարցերի շուրջ խորհրդատվության տրամադրման համար (օրինակ՝ բարեկարգություն, անհամատեղելիության պահանջներ, շահերի բախում, վարչական իրավախախտումներին վերաբերող դեպքերի քննություն) և իրենց պատասխանատվության շրջանակում գտնվող ոլորտներում վարչական պատիժներ կիրառելու համար: Տե՛ս՝ ՀՀ ՕՐԵՆՔԸ «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» (ARLIS, 9 հունիսի 2017թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172271>:

³⁰ ՀՀ ՕՐԵՆՔԸ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», (ARLIS, 7 դեկտեմբերի 2022թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=172230>:

³¹ ՀՀ ՕՐԵՆՔԸ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ARLIS, 11 ապրիլի 2024թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=192458>, «ՀՀ ՕՐԵՆՔԸ «ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ARLIS, 2 մայիսի 2024թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=192453>, ՀՀ ՕՐԵՆՔԸ «ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», (ARLIS, 11 ապրիլի 2024թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=192459>, ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ «ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՍՏԱՑՎԱԾ ՆՎԵՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ, ՆՎԵՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՆՎԵՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԽԱՆՏՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱՂԻՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՌԵԵՍՏՐՈՒՄ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ», (ARLIS, 22 դեկտեմբերի 2023թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=199926>; ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ՝ ՊԵՏԱԿԱՆ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁԱԾ ՆՎԵՐՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԱՋԻՆ ՏԵՄԱԿԻ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԱՌԱՋԱՀԱՆՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ «ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱՂԻՄԱՆ ԿԱՐԳԸ, ՇՈՒՏ ՓՉԱՑՈՂ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԷԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ ՊԱՀԱՆՁՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ ՑԱՆԿԸ, ՇՈՒՏ ՓՉԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՈՉՆԱԿԱՆ ԴԵՊՔԵՐԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ», (ARLIS, 20 հունիսի 2024թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=194326>:

³² Սյուզաննա Սողոմոնյան (Իրավաբանների հայկական ասոցիացիա), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 14 փետրվարի 2025թ.:

³³ Իրավաբանների հայկական ասոցիացիա, «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների նվերների ինստիտուտի կատարելագործմանն ուղղված փորձագիտական վերլուծություններ» (16 մայիսի 2024թ.), <https://armia.am/52438.html>:

³⁴ Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբ և Եվրոպայի խորհուրդ, *Գնահատման չորրորդ փուլ. Հայաստանի համապատասխանության երկրորդ գեկույցի հավելված* (ԳՐԵԿՈ-ի քարտուղարություն, 11 դեկտեմբերի 2024թ.), <https://rm.coe.int/greco4-2024-11-final-eng-add-to-the-2nd-compliance-report-armenia-pu/1680b2bb9f>:

³⁵ Տիգրանուհի Խալափյան (ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 27 հունվարի 2025թ.:

³⁶ Գոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, «Նվերների հաշվառման ձևաթղթերի՝ Հանձնաժողով ներկայացման վերաբերյալ» (4 հոկտեմբերի 2024թ.), <https://cpcarmenia.am/news/nverneri-hashvarman-dzevatgheri%D5%9D-handznazhoghov-nerkayacman-veraberyal/>:

³⁷ Տե՛ս https://drive.google.com/drive/folders/1SHZ8YoAFdDkT8L-KNFm_g1wjCb1Q9EsW:

³⁸ Խալափյան, հարցազրույց:

³⁹ Գոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հրապարակումը (Facebook, 25 հունիսի 2024թ.), https://www.facebook.com/permalink.php?story_fbid=774750708153392&id=100068554087037:

⁴⁰ Խալափյան, հարցազրույց:

⁴¹ Արմեն Խուդավերդյան (Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 24 հունվարի 2025թ., Խալափյան, հարցազրույց, Սողոմոնյան, հարցազրույց, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, *Հայաստանի ազդարարման համակարգի համապատասխանությունը միջազգային սկզբունքներին* (2024թ.), <https://transparency.am/hy/publication/376>:

⁴² Սողոմոնյան, հարցազրույց, Խալափյան, հարցազրույց, ՀՀ արդարադատության նախարարություն, «Հակակոռուպցիոն ռազմավարություն» (հասանելի է եղել 2025թ. ապրիլին), <https://www.moj.am/page/583>:

⁴³ Խուդավերդյան, հարցազրույց, Գրիշա Բալասանյան (Հետք), հարցազրույց ԱՀՄ-ի հետազոտողի հետ, 22 փետրվարի 2025թ., Սողոմոնյան, հարցազրույց:

⁴⁴ Սողոմոնյան, հարցազրույց, Մարիամ Շահնազարյան, «Ճարմանդ, ժամացույցներ, կտավներ, բաժակների, թելերի հավաքածու. պաշտոնատար անձանց ԿԿՀ ներկայացրած նվերներն ու դրանց արժեքների գնահատումը», (Iravaban.net, 20 հունվարի 2025թ.), <https://iravaban.net/508396.html>:

⁴⁵ Խալափյան, հարցազրույց:

⁴⁶ Բաց կառավարման գործընկերություն, Armenia: Digital Gift Register for Public Officials [«Հայաստան. հանրային պաշտոնատար անձանց համար նվերների թվային ռեգիստր»] (հասանելի է եղել 2025թ. ապրիլին), <https://www.opengovpartnership.org/the-open-gov-challenge/armenia-digital-gift-declaration-register-public-officials/>:

⁴⁷ Խուդավերդյան, հարցազրույց, Բալասանյան, հարցազրույց, Սողոմոնյան, հարցազրույց:

⁴⁸ Նույնը:

⁴⁹ Խուդավերդյան, հարցազրույց:

⁵⁰ Մեկնաբանությունը ԱՀՄ-ին տրամադրվել է Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից՝ սույն գեկույցի հրապարակմանը նախորդող վերանայման փուլում, 21 ապրիլի, 2025թ.:

Բաժին III. Մասնակցություն և համաստեղծում

Գործողությունների հինգերորդ ծրագրի համաստեղծման գործընթացը ներառում էր լայնածավալ խորհրդակցություններ, մարզային ներգրավվածություն և հանրությանը տեղեկացնելու բազմազան մեթոդներ: Իրականացման փուլում մասնակցությունն ավելի սահմանափակ էր, մասնավորապես՝ բազմաշահառու հանդիպումներն ավելի հազվադեպ էին: Վարչապետի աշխատակազմում բաց կառավարման հարցերով հատուկ ստորաբաժանման ստեղծումը կարող է նպաստել գործողությունների ծրագրերի հետագա շրջափուլերի ընթացքում համակարգման բարելավմանը ու մասնակցության շարունակականությանը:

ԲԿԳ-ն Հայաստանում

Հայաստանում ԲԿԳ գործընթացը առաջնորդում է ՀՀ վարչապետի աշխատակազմը (Աշխատակազմ): Կառավարության ԲԿԳ հարցերով պատասխանատուն համակարգում է գործընթացը՝ Աշխատակազմի ղեկավարի վերահսկողությամբ: Գործողությունների հինգերորդ ծրագրի իրականացման ընթացքում ԲԿԳ գործընթացի կառավարումն ու տեխնիկական աջակցությունը հետևողական ու շարունակական են եղել: Գործողությունների ծրագրի ավարտին՝ 2024 թվականի դեկտեմբերի 26-ին, ՀՀ վարչապետի որոշմամբ Աշխատակազմում ստեղծվել է Մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչություն: Այս վարչությունն, ի թիվս այլ գործառնությունների, պատասխանատու է բաց կառավարման ծրագրերի իրականացման և համակարգման համար⁵¹: Այսպիսով, ավելի շատ ռեսուրսներ կհատկացվեն ԲԿԳ-ի և կառավարության կողմից բաց կառավարման այլ նախաձեռնությունների կազմակերպմանը և համակարգմանը:

Ի տարբերություն գործողությունների ծրագրերի նախորդ շրջափուլերի՝ գործողությունների հինգերորդ ծրագրի մշակման և իրականացման համար պաշտոնական աշխատանքային խումբ չի ձևավորվել: Փոխարենը գործել է ոչ ֆորմալ բազմաշահառու ֆորում (ԲՇՖ), որին մասնակցում էին գործողությունների ծրագրի հանձնառությունների համար պատասխանատու պետական մարմինների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Նախորդ շրջափուլում աշխատանքային խմբում ներգրավված յոթ ՔՀԿ-ներից զատ ԲՇՖ-ին միացել են նաև նոր ՔՀԿ-ներ՝ մասնակցության դիմում ներկայացնելու կամ տեղական և ազգային ԲԿԳ ծրագրերին աջակցություն ցուցաբերելու արդյունքում⁵²: Առաջին անգամ Հայաստանի ԲԿԳ գործընթացում ներգրավվել է նաև գյուղական բնակավայրերի քաղաքացիական հասարակությունը՝ ազգային և տեղական գործողությունների ծրագրերի հանձնառությունների համաստեղծման շուրջ համայնքապետարաններում կազմակերպված քննարկումների միջոցով, որոնք իրականացվել են ԲԿԳ Աջակցության բաժնի տեխնիկական աջակցությամբ: ԲԿԳ հարցերով պատասխանատուն ԲՇՖ-ին էլեկտրոնային փոստի միջոցով պարբերաբար տեղեկացրել է ԲԿԳ-ին առնչվող նորությունների, ինչպես նաև ԲՇՖ հանդիպումների մասին: Մասնակցության հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը և դիմումի ձևը հրապարակվել են կառավարության ԲԿԳ կայքում⁵³: Սակայն թե՛ համաստեղծման և թե՛ իրականացման փուլերում ԲՇՖ անդամակցության կամ

կառավարման կառուցվածքի վերաբերյալ որևէ հասանելի փաստաթուղթ չկար, չեն եղել նաև հանրությանը մատչելի տեղեկություններ ԲՇԳ-ին մասնակցելու կանոնների, լիազորությունների շրջանակի կամ կազմի վերաբերյալ:

Կառավարությունը վարում է ԲԿԳ պաշտոնական կայքը՝ <https://ogp.gov.am/> հասցեով: 2025 թվականի փետրվարի դրությամբ կայքի նորությունների բաժինը թարմացված չէր 2022 թվականից ի վեր: Մինչև ժամանակ, ԲԿԳ հարցերով պատասխանատուն ԲԿԳ գործընթացների, տեղական ու միջազգային միջոցառումների և առնչվող նորությունների վերաբերյալ պարբերաբար տեղեկություններ է հրապարակում ԲԿԳ Հայաստանի ֆեյսբուքյան էջում, որն ունի ավելի քան հազար հետևորդ⁵⁴:

Գործողությունների ծրագրի համաստեղծում

Հայաստանի գործողությունների հինգերորդ ծրագրի համաստեղծման գործընթացը նշանավորվեց խորհրդակցությունների բարձր որակով և ծավալով՝ ներառելով մի շարք առցանց և առկա ձևաչափով քննարկումներ: Ընդհանուր առմամբ, գործողությունների հինգերորդ ծրագրի համաստեղծման փուլում մասնակցության ու երկխոսության տեսանկյունից որոշ բարելավումներ արձանագրվեցին՝ նախորդ շրջափուլերի համեմատ: Դրական փորձ էր համաստեղծման ընթացքում տարբեր խմբերի ներգրավումը, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության լայնածավալ մասնակցությունը, մարզերում կազմակերպված հանրային քննարկումները և միջազգային գործընկերների հետ համագործակցությունը: Արմավիրի զարգացման կենտրոնը, Իրավաբանների հայկական ասոցիացիան և Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ԲԿԳ հարցերով պատասխանատուի հետ համագործակցությամբ մի շարք միջոցառումներ կազմակերպեցին «ԵՄ-ն հանուն բարելավարության՝ Արևելյան գործընկերության համար» ծրագրի շրջանակում, ներառյալ առցանց հանրային քննարկումներն ութ մարզերի ներկայացուցիչների հետ և մայրաքաղաքից դուրս կազմակերպված համայնքային ժողովները: Հանձնառությունների առաջարկները հավաքագրվել են էլեկտրոնային փոստով, ինչպես նաև առաջին անգամ՝ կառավարության ԲԿԳ կայքում տեղադրված հատուկ ձևաթղթի միջոցով: Կառավարությունը YouTube-ով տեսանյութ հրապարակեց և Հանրային հեռուստատեսությամբ հաղորդում հեռարձակեց՝ տեղեկացնելով ԲԿԳ գործընթացի և գործողությունների ծրագրի վերաբերյալ առաջարկներ ներկայացնելու հնարավորությունների մասին⁵⁵: ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի «Կոլբա Լաբ» նախաձեռնությունը 2021 թվականի դեկտեմբերին կազմակերպեց փորձագիտական աշխատաժողով՝ հանձնառությունների մասին առաջարկներ հավաքագրելու նպատակով: 2022 թվականի մարտին Արմավիրի զարգացման կենտրոնը և կառավարությունը համատեղ չորս թեմատիկ քննարկում կազմակերպեցին կարճ ցուցակում ներառված հանձնառությունների շուրջ⁵⁶: Իրավաբանների հայկական ասոցիացիան կազմակերպում էր նաև առցանց քննարկումներ⁵⁷:

Այնուհետև կառավարությունն ուսումնասիրել է ներկայացված առաջարկները՝ հիմք ընդունելով ԲԿԳ արժեքներին և կառավարության առկա առաջնահերթություններին դրանց համապատասխանությունը, ապա ՔՀԿ-ների կոնստրեկտիվ հետ կազմակերպել շահագրգիռ կողմերի մասնակցությամբ թեմատիկ աշխատաժողովներ՝ կարճ ցուցակում ներառված գաղափարների շուրջ հանձնառություններ ձևակերպելու նպատակով: Թեմատիկ հանդիպումները նպաստել են առկա խնդիրների վերաբերյալ ընդհանուր պատկերացումների և մտահոգությունների հիման վրա երկխոսության խթանմանը, ինչպես նաև օգնել նոր գաղափարների ձևավորմանը: Գործողությունների ծրագրի մեկնարկից հետո՝

2023 թվականի փետրվարին, կառավարությունը հանրային միջոցառում կազմակերպեց գործողությունների ծրագիրը ներկայացնելու և համագործակցության հնարավորություններ քննարկելու նպատակով: Միջոցառման ընթացքում ստացած կարծիքների, գործողությունների ծրագրի ուսումնասիրության ԱՀՄ գեկույցի առաջարկների և ներքին քննարկումների հիման վրա իրագործման առաջին տարվա ավարտին կառավարությունը վերանայեց և փոփոխեց ծրագիրը:

Գործողությունների ծրագրի նախագիծը, ինչպես նաև վերանայված տարբերակը համապատասխանաբար 2022 թվականի հուլիս–օգոստոս և 2023 թվականի օգոստոս–սեպտեմբեր ամիսներին ներկայացվել են հանրային քննարկմանը իրավական ակտերի նախագծերի հրապարակման «e-draft» հարթակում՝ երկու շաբաթից ավելի ժամկետով⁵⁸: Շահակիցների կարծիքով՝ գործողությունների ծրագիրը, ընդհանուր առմամբ, անդրադառնում էր թե՛ կառավարության, թե՛ քաղաքացիական հասարակության առաջնահերթություններին և ավելի ռազմավարական ու համապարփակ է, քան նախորդ ծրագրերը:⁵⁹

Մասնակցությունը իրականացման փուլում

Ի տարբերություն համաստեղծման գործընթացի՝ իրականացման փուլում ԲՇՖ հանդիպումներն ավելի հազվադեպ էին: Հանձնառությունների իրականացումը քննարկելու նպատակով երկու առցանց ԲՇՖ հանդիպում է կազմակերպվել՝ 2023 թվականի հուլիսին և 2024 թվականի նոյեմբերին: Այս հանդիպումների ընթացքում պետական մարմինների ներկայացուցիչները տեղեկություններ են տրամադրել իրականացման ընթացքի մասին, իսկ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները հնարավորություն են ունեցել մեկնաբանություններ ներկայացնելու, հարցեր ուղղելու և առաջարկություններ անելու: Այս հանդիպումների վերաբերյալ համառոտ անդրադարձ է հրապարակվել կառավարության ԲԿԳ ֆեյսբուքյան էջում, իսկ առաջին հանդիպման տեսագրությունը հրապարակվել է ԲԿԳ Հայաստանի YouTube-ի ալիքում⁶⁰:

Բացի այդ, վարչապետի աշխատակազմի, պատասխանատու պետական մարմինների, ՔՀԿ-ների և/կամ միջազգային գործընկերների նախաձեռնությամբ հանդիպումներ են կազմակերպվել առանձին հանձնառությունների շուրջ: Ինչպես և գործողությունների նախորդ ծրագրում, այս անգամ էլ դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերը խթանել են կառավարության և քաղաքացիական հասարակության միջև ավելի սերտ համագործակցությունը: Օրինակ՝ ԲԿԳ Արևելյան գործընկերության ծրագրի «Բաց դռներ» դրամաշնորհը հնարավորություն տվեց Ինֆորմացիայի ազատության կենտրոնին մշակել տեղեկատվության ազատության ինքնագնահատման գործիքակազմ և աշխատաժողովներ կազմակերպել պիլոտային գերատեսչությունների համար՝ օգնելով իրականացնել ինքնագնահատումը (Հանձնառություն 3), ինչպես նաև իրական սեփականատերերի մշտադիտարկման կարողություններ զարգացնել⁶¹: Նվերների ռեեստրի (Հանձնառություն 7) և «e-court» վիճակագրության (Հանձնառություն 9) հանձնառություններին աջակցելու նպատակով Իրավաբանների հայկական ասոցիացիան իրականացրեց միջազգային փորձի ուսումնասիրություն և իրավական վերլուծություն, ինչպես նաև քննարկումներ և հանդիպումներ կազմակերպեց այդ հանձնառությունների շուրջ⁶²: Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոնը մատչելի տեղեկատվություն, տեսանյութեր և պատկերներ պատրաստեց ու համագործակցեց Ֆինանսների նախարարության հետ՝ 2024 թվականի պետական բյուջեն «Քաղաքացու բյուջե» ձևաչափով ներկայացնելու համար

(Հանձնառություն 4)⁶³: Տարբեր դոնոր կազմակերպությունների աջակցությամբ կառավարությունը խորհրդակցություններ է կազմակերպել քաղաքացիական հասարակության և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ էլեկտրոնային գնումների հարթակի (Հանձնառություն 8), տվյալների քաղաքականությունը սահմանող օրենսդրության (Հանձնառություն 1), ռազմավարական հաղորդակցության (Հանձնառություն 2) և աշխատանքային պայմանագրերի (Հանձնառություն 10) շուրջ: Տեղական մակարդակում մասնակցային բյուջետավորման իրականացման (Հանձնառություն 5) համար Գերմանական միջազգային համագործակցության ընկերությունը (GIZ) տեխնիկական աջակցություն է տրամադրել ուղեցույցների մշակման, թվային լուծումների ստեղծման և ՔՀԿ-ների կողմից իրականացվող իրազեկման նախաձեռնությունների ֆինանսավորման միջոցով:

Հարցազրույցների մասնակիցները նշել են, որ որոշ հանձնառությունների ներքո իրականացված գործողությունների մասին տեղեկատվությունը բավականաչափ չի հաղորդակցվել ԲՇՖ անդամների շրջանում: ԲՇՖ-ում ներգրավված ՔՀԿ-ները հաճախ տեղեկացված են եղել միայն այն հանձնառությունների մասին, որոնցում անմիջականորեն ներգրավված էին, իսկ գործողությունների ծրագրի իրականացման մասին ընդհանուր տեղեկատվությունը հիմնականում սահմանափակվել է ԲՇՖ հազվադեպ հանդիպումներով: Թեև կառավարությունն ակտիվորեն օգտագործել է ԲԿԳ Հայաստանի ֆեյսբուքյան էջը՝ նորություններ տրամադրելու համար, այդ տեղեկատվությունը ԲՇՖ ոչ բոլոր անդամներին է հասել: Կառավարության ԲԿԳ պաշտոնական կայքը չի թարմացվել, ինչը նվազեցրել է ԲԿԳ գործընթացի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Գործողությունների հետագա ծրագրերի համար առաջարկվում է, որ ԲԿԳ հարցերով պատասխանատուն կամ պատասխանատու պետական գերատեսչությունները ուղիղ էլեկտրոնային նամակներով տեղեկացնեն կոնկրետ հանձնառությունների հետ կապված (ներառյալ՝ ՔՀԿ-ների կամ դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի շրջանակում իրականացվող) միջոցառումների և նորությունների մասին, ինչը կբարելավի հաղորդակցությունը: Կառավարությունը պետք է նաև նախաձեռնողաբար հրապարակի համաստեղծման գործընթացի և հանձնառությունների իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը ԲԿԳ կայքում⁶⁴: Բացի այդ, կառավարությունը կարող է ԲՇՖ հանդիպումները բաց դարձնել բոլոր հետաքրքրված մասնակիցների համար՝ հանդիպումների մասին նախապես հայտարարելով և գրանցման պահանջ սահմանելով դեմառդեմ հանդիպումներին մասնակցելու համար: Հետագա միջոցառումներին կարելի է նպատակայնորեն հրավիրել նաև պետական ծառայողներին: Վերջապես, կառավարությունը կարող է ամրապնդել թափանցիկությունն ու հանրային մասնակցությունը՝ կանոնավոր (օրինակ՝ եռամսյակային) հրապարակային հաշվետվությունների, այդ թվում՝ մամուլ ասուլիսների կամ գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ միջանկյալ գեկույցների միջոցով:

ԱՀՄ-ն օգտագործում է ԲԿԳ-ի մասնակցության և համաստեղծման չափորոշիչները՝ գնահատելու երկրների մասնակցային մոտեցումները գործողությունների ծրագրի ամբողջ շրջափուլի ընթացքում⁶⁵: Երկրներին քաջալերում են ձգտել այդ չափորոշիչների ամբողջական իրագործմանը և ապահովել նվազագույն պահանջների կատարումը յուրաքանչյուր չափորոշիչի ներքո⁶⁶: ԲԿԳ-ի մասնակցության և համաստեղծման չափորոշիչներին համապատասխանությունն ապահովելու համար ԱՀՄ-ն Հայաստանի կառավարությանը խորհուրդ է տալիս հրապարակել համաստեղծման և իրականացման գործընթացներում շահակիցների մասնակցության հիմնական կանոնները: Ցանկալի է, որ

այս կանոնները հստակեցնեն Հայաստանի ներկայիս բազմաշահառու տարածքի մանդատը, կազմը և կառուցվածքը:

Աղյուսակ 2. Համապատասխանություն նվազագույն պահանջներին

Նվազագույն պահանջ	Համաստեղծում	Իրականացում
1.1 Երկխոսության տարածք. Ի տարբերություն գործողությունների նախորդ ծրագրերի շրջափուլերի՝ պաշտոնական ԲԿԳ աշխատանքային խումբ չկա: Նախորդ ծրագրում ներգրավված ՔՀԿ-ները շարունակել են մասնակցել ԲՇՖ հանդիպումներին, նաև նոր ՔՀԿ-ներ են միացել: ԲԿԳ հարցերով պատասխանատուն նշել է, որ ԲՇՖ ոչ պաշտոնական ձևաչափն ավելի արդյունավետ և ճկուն է եղել՝ նպաստելով ավելի մեծ ներգրավվածությանն ու մասնակցությանը: ԲՇՖ-ին միանալու դիմումի ձևաչափը հասանելի է Հայաստանի ԲԿԳ կայքում⁶⁷: Սակայն ո՛չ դիմումի ձևը, ո՛չ սոցիալական ցանցերում հրապարակումները, ո՛չ էլ ԲԿԳ կայքը տեղեկատվություն չեն տալիս ԲՇՖ-ին մասնակցելու կանոնների կամ ֆորումի ներկայիս անդամակցության վերաբերյալ: ԲԿԳ մասնակցության և համաստեղծման չափորոշիչները պահանջում են, որ անդամ երկրների երկխոսության տարածքին մասնակցելու հիմնական կանոնները հանրայնորեն հասանելի լինեն: ԲՇՖ հանդիպումները տեղի են ունեցել 2023 թվականի հուլիսին և 2024 թվականի նոյեմբերին⁶⁸: Բացի այդ, 2023 թվականի փետրվարին կազմակերպվել է հանրային միջոցառում, որին մասնակցել է ԲՇՖ-ն և որը բաց է եղել քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների ավելի լայն շրջանակի համար⁶⁹: 2024 թվականի հուլիսին պետական մարմինների ներկայացուցիչները հանդիպել են հանձնառությունների կատարման ընթացքը քննարկելու համար⁷⁰:	Ոչ	Ոչ
2.1 ԲԿԳ կայք. Կառավարությունը վարում է ԲԿԳ պաշտոնական կայքը (https://ogp.gov.am/), որտեղ ընդհանուր տեղեկատվություն է ներկայացված ԲԿԳ-ի, նախորդ և ներկա գործողությունների ծրագրերի, աշխատանքային խմբի և այլ հարցերի վերաբերյալ (անգլերեն և հայերեն լեզուներով): Կայք մուտք գործելու համար գրանցվելու կարիք չկա: Կառավարությունը նաև վարում է ԲԿԳ Հայաստանի պաշտոնական ֆեյսբուքյան էջը:	Այո	Այո
2.2 Շտեմարան. ԲԿԳ Հայաստանի պաշտոնական ֆեյսբուքյան էջը պարբերաբար թարմացվել է, այդ թվում՝ հանձնառությունների կատարման վերաբերյալ տեղեկատվությամբ: ԲԿԳ պաշտոնական կայքը ներկայացնում է գործողությունների ընթացիկ ծրագիրը և հանձնառությունները՝ տեղ հատկացնելով յուրաքանչյուր հանձնառության միջանկյալ արդյունքների վերաբերյալ	Այո	Այո

տեղեկատվությանը, ներառյալ դրանց նկարագրությունը և կարգավիճակը ⁷¹ : Իրականացման ժամանակահատվածի ավարտին կայքում տեղեկատվություն կար գործողությունների հինգերորդ ծրագրի մեկ հանձնառության կատարման վերաբերյալ՝ լրացուցիչ տեղեկատվության հղումով: Մյուս հանձնառությունների դեպքում նշված էր միայն գործողությունների կարգավիճակը՝ առանց կատարման վերաբերյալ մանրամասների: ⁷²		
3.1 Նախապես ծանուցում. Տե՛ս Գործողությունների ծրագրի ուսումնասիրության գեկույցը ⁷³ :	Այո	Կիրառելի չէ
3.2 Հանրության հետ կապ. Տե՛ս Գործողությունների ծրագրի ուսումնասիրության գեկույցը:	Այո	Կիրառելի չէ
3.3 Հետադարձ կապի կառուցակարգ. Տե՛ս Գործողությունների ուսումնասիրության գեկույցը:	Այո	Կիրառելի չէ
4.1 Պատճառաբանված պատասխան. Տե՛ս Գործողությունների ուսումնասիրության գեկույցը:	Այո	Կիրառելի չէ
5.1 Բաց իրականացում. Իրականացման փուլում՝ 2023 թվականի փետրվարին կառավարությունը հանդիպել է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ՝ գործողությունների ծրագիրը ներկայացնելու և իրականացման վերաբերյալ առաջարկներ հավաքագրելու համար: Նրանք կրկին հանդիպել են 2023 թվականի հուլիսին և 2024 թվականի նոյեմբերին՝ իրականացման գործընթացը ներկայացնելու համար ⁷⁴ : Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները հնարավորություն են ունեցել հարցեր տալ և առաջարկներ ներկայացնել հետագա քայլերի վերաբերյալ: Բացի այդ, կառավարությունը, քաղաքացիական հասարակությունը և միջազգային կազմակերպությունները տեղական և ազգային մակարդակի միջոցառումներ են կազմակերպել առանձին հանձնառությունների վերաբերյալ՝ տվյալ ոլորտում առկա խնդիրներն ու բացերը քննարկելու, փաստաթղթերի նախագծերի շուրջ խորհրդակցելու և արդյունքների մասին իրազեկելու նպատակով:	Կիրառելի չէ	Այո

⁵¹ ՀՀ ՎԱՐԶԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ «ՀՀ ՎԱՐԶԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 25-Ի N 564-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ARLIS, 26 դեկտեմբերի 2024թ.),

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=201524>:

⁵² Լիլյա Աֆրիկյան (ՀՀ վարչապետի գրասենյակ), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 22 հունվարի 2025թ.:

⁵³ Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան. «Միացիր խմբին» (հասանելի է եղել ապրիլի 2025թ.),

<https://ogp.gov.am/hy/Ինչպես-միանալ-խմբին>:

⁵⁴ «ԲԿԳ/Հայաստան [Գլխավոր էջ] (Facebook, հասանելի է եղել 2025թ. ապրիլին),

<https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/>:

⁵⁵ ՀՀ կառավարություն, «Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան» նախաձեռնությունը հանրությունից առաջարկների է սպասում» (YouTube, 6 դեկտեմբերի 2021թ.),

<https://www.youtube.com/watch?v=RpWBU7E5gM0&t=18s>:

⁵⁶ Հանդիպումների մասին տե՛ս՝ Կոլբա լաբի հրապարակումը (Facebook, 6 դեկտեմբերի 2021թ.),

<https://www.facebook.com/KolbaLab/posts/pfbid02dKwubHcHpGV9eoGK1twjcAXQoY8a5f9Rku3EJRxsxdDY09ykSK8EXZvDeDdNZ6Vo8l>, Արմավիրի զարգացման կենտրոնի հրապարակումը (Facebook, 8 մարտի 2022թ.),

<https://www.facebook.com/armavirdc/posts/pfbid0zr1bKSqLvRWxrKC5q6etA9KZQVU1haTgugm5yTVJ4XLaPFXUUA1msdUZryGG5BzYl>, ԲԿԳ/Հայաստանի հրապարակումը (Facebook, 9 մարտի 2022թ.),

<https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/pfbid02IEuQ7fHXZ3274gtM1VnAfaVeR8CTdx7DwMvjo7umkx2aLviJvGwNy3msc79WxEx7l>, ԲԿԳ/Հայաստանի հրապարակումը (Facebook, 11 մարտի 2022թ.),

<https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/pfbid0kfedEWTx2sYyNtUXCjo8GA3vFPBxHtydsbuBvzZFCRd5tyDNajyM5trTGIjYdXl>, ԲԿԳ/Հայաստանի հրապարակումը (Facebook, 17 մարտի 2022թ.),

<https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/pfbid0vmnCKE8NbGwK96xMfUjt2eRVtau5tGh5UrGcyviGTvsq1kjGU9YrWamXP9nvLfl>:

⁵⁷ Իրավաբանների հայկական ասոցիացիա, «ԲԿԳ ազգային գործողությունների 5-րդ ծրագրի մշակման շրջանակներում հանրային-մասնավոր երկխոսության ձևաչափով առցանց քննարկում. հանրային բարեկարգության, պետական գնումներ» (11 մայիսի 2022թ.), <https://armia.am/49305.html>, Իրավաբանների հայկական ասոցիացիա, «Հանրային-մասնավոր երկխոսություն՝ հանրային հաղորդակցման ռազմավարության և էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրման շուրջ» (17 մայիսի 2022թ.), <https://armia.am/49308.html>, Իրավաբանների հայկական ասոցիացիա, «Աշխատանքային պայմանագրերի թվային ստորագրում և «Բարև բալիկ» տեղեկատվական հարթակի ներդրում. առցանց քննարկում հանրային-մասնավոր երկխոսության ձևաչափով» (24 մայիսի 2022թ.), <https://armia.am/49315.html>, Իրավաբանների հայկական ասոցիացիա, «Բյուջետային գործընթացում մասնակցային մեխանիզմների զարգացում և իրական շահառուների մասով գործող, նախատեսվող ռեսուրսների փոխգործելիություն. Առցանց քննարկում հանրային-մասնավոր ձևաչափով» (30 մայիսի 2022թ.), <https://armia.am/49328.html>

⁵⁸ Վարչապետի աշխատակազմ, «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2022 – 2024 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» որոշում (Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, 18 մայիսի 2022թ.), <https://www.e-draft.am/en/projects/4581/>, Վարչապետի աշխատակազմ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի Ն 1568-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՍԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, 15 սեպտեմբերի 2023թ.), <https://www.e-draft.am/projects/6189>:

⁵⁹ Տաթևիկ Մարգարյան, Անկախ հաշվետվական մեխանիզմ «Գործողությունների ծրագրի ուսումնասիրություն. Հայաստան 2022-2024» (Բաց կառավարման գործընկերություն, 15 հունվարի 2023թ.), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2023/06/Armenia_Action-Plan-Review_2022-2024_ARM.pdf:

⁶⁰ ԲԿԳ/Հայաստանի հրապարակում (Facebook, 8 փետրվարի 2023թ.),

<https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/pfbid0cMpmnHMm2JJz8A6SHnaoVEhbJEttAjTUz38bcJGxvCdymzTKXTigLQVBxBDbLqMjnl>, ԲԿԳ/Հայաստանի հրապարակում (Facebook, 25 հուլիսի 2023թ.),

<https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/pfbid0yhpBhnj77nRn5JFZyZT31XZ7zMRrV1acaCFfPhxqf8SPkmtWNmSz8TWu7xBcLovYl>, ԲԿԳ/Հայաստանի հրապարակում (Facebook, 8 նոյեմբերի 2024թ.),

<https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/pfbid02JyMiTop4QifCtZQ7vyq2MZwesaPbe8vPVB4rOPmrESE8yWAYY5RjwG7yHQn98r1Zl>; ԲԿԳ Հայաստան, OGP MSF meeting 21.07.2023 [«ԲԿԳ ԲԾՖ հանդիպում 21.07.2023թ.»] (YouTube, 25 հուլիսի 2023թ.), https://www.youtube.com/watch?v=HEeagq_puZs:

⁶¹ Ինֆորմացիայի ազատության կենտրոն, «68. Տեղեկատվության մատչելիության բարեփոխում և իրական շահառուների թափանցիկությունը Հայաստանում» (30 նոյեմբերի 2023թ.), https://foi.am/completed_projects/3825:

⁶² Իրավաբանների հայկական ասոցիացիա, «Բազմակողմանի ԲԿԳ գործողություն. Բաց արդարադատության և հակակոռուպցիոն ոլորտի հանձնառություններ՝ էլեկտրոնային դատարանների և նվերների գրանցամատյանի վերաբերյալ» (13 դեկտեմբերի 2023թ.), <https://armia.am/51347.html>:

⁶³ Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն, «Քաղաքացու բյուջե 2024» (ԵՄ ԲԿԳ) (հասանելի է եղել 2025թ. ապրիլին), <https://www.acses.am/եմ-բլգ-բաց-դրների-դրամաշնորհներ/>:

⁶⁴ Նաիրա Առաքելյան (Արմավիրի զարգացման կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 24 փետրվարի 2025թ., Սոնա Այվազյան (Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 6 փետրվարի 2025թ., Արփինե Հակոբյան (ՀԿ կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի կողմից, 26 փետրվարի 2025թ.:

⁶⁵ Բաց կառավարման գործընկերություն, «OGP Participation and Co-Creation Standards» [ԲԿԳ մասնակցության և համաստեղծման չափորոշիչներ] (24 նոյեմբերի 2021թ.), <https://www.opengovpartnership.org/ogp-participation-co-creation-standards/>.

⁶⁶ Բաց կառավարման գործընկերություն, «IRM Guidelines for the Assessment of Minimum Requirements» [Նվազագույն պահանջների գնահատման ԱՀՄ ուղեցույց] (31 մայիսի 2022թ.), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2022/05/IRM-Guidelines-for-Assessment-of-Minimum-Requirements_20220531_EN.pdf.

⁶⁷ Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, «Միացիր խմբին»:

⁶⁸ ԲԿԳ/Հայաստանի հրապարակում (Facebook, 25 հուլիսի 2023թ.), ԲԿԳ/Հայաստանի հրապարակում (Facebook, 8 նոյեմբերի 2024թ.):

⁶⁹ ԲԿԳ/Հայաստանի հրապարակում (Facebook, 8 փետրվարի, 2023թ.):

⁷⁰ Հայաստանի Հանրապետության կառավարություն, Պաշտոնական լրահոս, «Կայացել է «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության պետական համակարգի մարմինների մասնակցությամբ նիստը», (31 հուլիսի 2024թ.), <https://www.gov.am/am/news/item/15935>:

⁷¹ Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, «Բաց կառավարման գործընկերություն – Հայաստան գործողությունների ազգային ծրագիր 2022 – 2024» (18 մայիսի 2022թ.), <https://ogp.gov.am/en/ongoing-action-plan/բաց-կառավարման-գործընկերություն-նախաձեռնության-ըզանակներում-հայաստանի-հանրապետության-2022-2024-թ.>:

⁷² Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, «Գործողությունների ծրագրեր. 1. Տվյալների քաղաքականությունը սահմանող օրենսդրության ձևավորում» (2024թ. հունվար), <https://ogp.gov.am/en/commitments/27>:

⁷³ Մարգարյան, «Գործողությունների ծրագրի ուսումնասիրություն. Հայաստան 2022-2024»:

⁷⁴ ԲԿԳ/Հայաստանի հրապարակում (Facebook, 8 փետրվարի 2023թ.), ԲԿԳ/Հայաստանի հրապարակում (Facebook, 25 հուլիսի 2023թ.), ԲԿԳ/Հայաստանի հրապարակում (Facebook, 8 նոյեմբերի 2024թ.):

Բաժին IV. Մեթոդաբանություն

Սույն գեկույցն աջակցում է երկրների հաշվետվողականությանը և գիտելիքների ձեռքբերմանը՝ գործողությունների ծրագրի կատարողականի և վաղ փուլում արձանագրված արդյունքների գնահատման միջոցով: Զեկույցում ներկայացվում է գործողությունների ծրագրի ամենանշանակալի նախնական արդյունքներ ունեցող հանձնառությունների կամ փնջերի խորքային վերլուծությունը: Բացի այդ, գնահատվում է երկրի մասնակցության և համաստեղծման գործելակերպը գործողությունների ծրագրի ողջ շրջափուլի ընթացքում⁷⁵:

Գործողությունների ազգային ծրագրի շրջափուլի ընթացքում ԱՀՄ կողմից տրամադրվող փաստաթղթերը ներառում են հետևյալը.

- **Համաստեղծման ամփոփագիր.** հակիրճ ամփոփագիր, որը վեր է հանում ԱՀՄ նախորդ գեկույցներից քաղված դասերը՝ երկրի ԲԿԳ գործընթացին, գործողությունների ծրագրի մշակմանը և ընդհանուր առմամբ ուսուցողական գործընթացին աջակցելու համար:
- **Գործողությունների ծրագրի ուսումնասիրություն.** Գործողությունների ծրագրի հիմնական բնութագրերը և ԱՀՄ-ի կողմից հայտնաբերված ուժեղ կողմերը և մարտահրավերները նկարագրող տեխնիկական ուսումնասիրություն՝ ավելի արդյունավետ իրականացման գործընթացին աջակցելու նպատակով:
- **Միջնաժամկետ ուսումնասիրություն.** Գործողությունների քառամյա ծրագրերի ուսումնասիրություն՝ միջնաժամկետ վերանայումից հետո: Ուսումնասիրությունը գնահատում է գործողությունների վերանայված ծրագրում նոր կամ զգալիորեն փոփոխված հանձնառությունները, ԲԿԳ կանոններին համապատասխանությունը և ոչ պաշտոնական տեղեկություններ տրամադրում իրականացման առաջընթացի վերաբերյալ:
- **Արդյունքների վերաբերյալ գեկույց.** Իրականացման ընդհանուր գնահատում, որը կենտրոնացնում է քաղաքականության ոլորտում գրանցված արդյունքների վրա, ինչպես նաև դիտարկում, թե ինչպես են տեղի ունենում փոփոխությունները: Այն նաև ստուգում է համապատասխանությունը ԲԿԳ կանոններին և աջակցում հաշվետվողականությանը և երկարաժամկետ ուսուցողական գործընթացին:

Արդյունքների վերաբերյալ գեկույցներում ԱՀՄ-ը գնահատում է հանձնառությունները ըստ երկու ցուցանիշի:

Կատարման մակարդակ

ԱՀՄ-ը գնահատում է գործողությունների ծրագրի բոլոր հանձնառությունների, այդ թվում՝ Գործողությունների ծրագրի ուսումնասիրության գեկույցում փնջերով ներկայացված հանձնառությունների կատարման մակարդակը:⁷⁶ Հանձնառությունների կատարման մակարդակը գնահատվում է ստորև բերված արժեքներով՝

- Տեղեկություն չկա
- Չի մեկնարկել
- Սահմանափակ
- Զգալի
- Ավարտված

Նախնական արդյունքներ

ԱՀՄ-ն գնահատում է յուրաքանչյուր հանձնառության կամ փնջի իրականացման ընթացքում վաղ փուլում արձանագրված արդյունքների նշանակալիությունը: Գնահատելիս ԱՀՄ-ն հաշվի է առնում հանձնառության նպատակը, երկրի համատեքստը, քաղաքականության ոլորտը և փոփոխությունների մասին վկայող ապացույցները: Նախնական արդյունքների ցուցանիշը կախված է տեղի ունեցած փոփոխության խորությունից և ժամանակի ընթացքում դրա կայունության պահպանման համար առկա հիմքերից: Նախնական արդյունքների ցուցանիշը երեք մակարդակ կարող է ունենալ՝

- **Նկատելի արդյունքներ չկան.** Ըստ տարբեր մեթոդներով (փաստաթղթերի վերլուծություն, հարցազրույցներ և այլն) հավաքագրված ինֆորմացիայի՝ բաց կառավարման հանձնառության իրականացումը հանգեցրել է փոքրաթիվ դրական արդյունքների կամ ընդհանրապես դրական արդյունք չի գրանցել: Իրականացման ժամանակահատվածում կատարված գործողությունները և դրանց արդյունքները (եթե այդպիսիք կան) գնահատելուց հետո ԱՀՄ-ն չի հայտնաբերել նշանակալի փոփոխություններ, որոնք միտված կլինեին հետևյալին
 - քաղաքականության տվյալ ոլորտում կամ պետական հատվածում գործելակերպի, քաղաքականության կամ ինստիտուտների բարելավում, կամ
 - քաղաքացիների և պետության միջև վստահություն ձևավորելու համար նպաստավոր միջավայրի բարելավում:
- **Զափավոր արդյունքներ.** Ըստ տարբեր մեթոդներով (փաստաթղթերի վերլուծություն, հարցազրույցներ և այլն) հավաքագրված ինֆորմացիայի՝ բաց կառավարման հանձնառության իրականացումը հանգեցրել է դրական արդյունքների: Իրականացման ժամանակահատվածում կատարված գործողությունները և դրանց արդյունքները գնահատելուց հետո ԱՀՄ-ը նշանակալի փոփոխություններ է արձանագրել հետևյալ ուղղություններով.
 - քաղաքականության տվյալ ոլորտում կամ պետական հատվածում գործելակերպի, քաղաքականության կամ ինստիտուտների բարելավում, կամ
 - քաղաքացիների և պետության միջև վստահություն ձևավորելու համար նպաստավոր միջավայրի բարելավում:
- **Զգալի արդյունքներ.** Ըստ տարբեր մեթոդներով (փաստաթղթերի վերլուծություն, հարցազրույցներ և այլն) հավաքագրված ինֆորմացիայի՝ բաց կառավարման հանձնառության իրականացումը հանգեցրել է զգալի դրական արդյունքների: Իրականացման ժամանակահատվածում կատարված գործողությունները և դրանց արդյունքները գնահատելուց հետո ԱՀՄ-ը նշանակալի փոփոխություններ է արձանագրել հետևյալ ուղղություններով.
 - քաղաքականության տվյալ ոլորտում կամ պետական հատվածում գործելակերպի, քաղաքականության կամ ինստիտուտների բարելավում, կամ
 - քաղաքացիների և պետության միջև վստահություն ձևավորելու համար նպաստավոր միջավայրի բարելավում:

Զգալի դրական արդյունքները նշանակում են, որ այս (վերը սահմանված) փոփոխությունների վերաբերյալ հստակ ակնկալիքները ժամանակի ընթացքում կայուն կլինեն:

Սույն գեկույցը պատրաստվել է ԱՀՄ-ի կողմից՝ Տաթևիկ Մարգարյանի հետ համագործակցությամբ և վերանայվել է ԱՀՄ արտաքին փորձագետ Թոմաս Կալինովսկու կողմից: ԱՀՄ մեթոդաբանությունը, փաստաթղթերի որակը և ուսումնասիրման գործընթացը վերահսկվում են ԱՀՄ փորձագետների միջազգային խմբի կողմից⁷⁵: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ԱՀՄ կայքէջը⁷⁶ կամ ԱՀՄ և ԲԿԳ եզրերի բառարանը⁷⁷:

⁷⁵ ԲԿԳ եզրերի (օրինակ՝ համաստեղծում և խոստումնալից հանձնառություններ) համար տե՛ս «ԲԿԳ բառարանը», <https://www.opengovpartnership.org/glossary/>:

⁷⁶ Գործողությունների ծրագրի ուսումնասիրության գործընթացում ԱՀՄ-ն փնջերի մեջ է խմբավորում այն հանձնառությունները, որոնք քաղաքականության ընդհանրական նպատակ ունեն: Այս դեպքում ԱՀՄ-ն «Արդյունքին միտված ներուժը» և «Նախնական արդյունքները» գնահատում է փնջի մակարդակում: Կատարման մակարդակը գնահատվում է առանձին հանձնառության համար: ԱՀՄ կողմից հանձնառությունները փնջերում խմբավորելու եղանակների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ Գործողությունների ծրագրի ուսումնասիրության գեկույցի՝ մեթոդաբանությանը վերաբերող Բաժին IV-ում:

⁷⁷ Բաց կառավարման գործընկերություն, Անկախ հաշվետվության մեխանիզմ, Փորձագետների միջազգային խումբ (հասանելի է եղել 2025թ. ապրիլին), <https://www.opengovpartnership.org/about/who-we-are/international-experts-panel/>:

⁷⁸ Բաց կառավարման գործընկերություն, ԱՀՄ վերաբերյալ ակնարկ (հասանելի է եղել 2025թ. ապրիլին), <https://www.opengovpartnership.org/irm-guidance-overview/>:

⁷⁹ Բաց կառավարման գործընկերություն, ԲԿԳ բառարան (հասանելի է եղել 2025թ. ապրիլին), <https://www.opengovpartnership.org/glossary/>:

Հավելված Ա. Տվյալներ ըստ հանձնառությունների⁸⁰

Հանձնառություն 1. Տվյալների քաղաքականությունը սահմանող օրենսդրության ձևավորում

- | | |
|--|---|
| <ul style="list-style-type: none"> • Ստուգելի՝ այո • Արդյո՞ք այն համապատասխանում է բաց կառավարման շրջանակին՝ այո • Արդյունքին միտված ներուժը՝ զգալի | <ul style="list-style-type: none"> • Կատարման մակարդակը՝ զգալի • Նախնական արդյունքներ՝ նկատելի արդյունքներ չկան |
|--|---|

Այս հանձնառության ներքո կառավարությունը նախատեսում էր ընդունել տվյալների միասնական կառավարման քաղաքականություն՝ պետության կողմից տեղեկությունների տնօրինումը կարգավորելու և բաց տվյալների քաղաքականություն սահմանելու նպատակով: Գործողությունների վերանայված ծրագրի համաձայն՝ կառավարությունը պլանավորում էր մշակել տվյալների քաղաքականությանը վերաբերող երկու իրավական ակտ՝ «Տեղեկատվության ազատության և հանրային տեղեկությունների մասին» օրենքը (որը կկարգավորի տվյալների կառավարման և տվյալներին հասանելիության հիմնական բաղադրիչները) և «Կիբեռանվտանգության մասին» օրենքը (որը տեղեկատվական համակարգերի համար կիբեռանվտանգ միջավայր կսահմանի): Հանձնառության նպատակն էր սահմանել պետության կողմից տնօրինվող տեղեկատվության հրապարակման հստակ կարգավորումներ և ապահովել բաց տվյալների սկզբունքների պահպանումը:

Կառավարությունն ուսումնասիրել է միջազգային փորձը և մշակել օրենքների նախագծերը և համապատասխան օրենսդրական փոփոխությունները: Նախագծերի փաթեթը քննարկվել է ՔՀԿ-ների, մեդիա կազմակերպությունների և փորձագետների հետ և հրապարակվել է «e-draft» հարթակում՝ հանրային քննարկման նպատակով⁸¹: «Տեղեկատվության ազատության և հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագիծը, որը պետք է փոխարիներ «Տեղեկատվության ազատության մասին» գործող օրենքին, հանրային քննարկման է ներկայացվել 2023 թվականի դեկտեմբերին⁸²: Քաղաքացիական հասարակությունը քննադատել է նախագիծը՝ նշելով, որ այն կարող է սահմանափակել տեղեկատվության ազատությունը⁸³: Այս մտահոգություններից հետո ՀՀ վարչապետի աշխատակազմը, համագործակցելով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության հետ, 2024 թվականի հունվար-փետրվար ամիսներին կազմակերպեց հանրային քննարկումներ⁸⁴: ՔՀԿ-ների մտահոգությունները հաշվի են առնվել «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի վերանայված նախագծում, որը ներառում է միայն տեղեկատվության կառավարման հետ կապված իրավահարաբերությունները: Նախագիծը կարգավորում է հանրային տեղեկությունների հավաքագրումը, մշակումը և օգտագործումը բաց տվյալների քաղաքականության միջոցով, տվյալների շտեմարանների ստեղծումը, կառավարումը և հասանելիությունը, ինչպես նաև համապատասխան վերահսկողության մեխանիզմները: Այն առաջարկում է պետական տեղեկատվական միասնական այնպիսի մի համակարգի գաղափար, որտեղ տեղեկատվության տնօրինող գերատեսչությունները մուտքագրում են տեղեկությունները և օգտագործում դրանք բացառապես իրենց գործառնությունների շրջանակներում: Օրենքի նախագիծը նաև նախատեսում է լիազոր

մարմին, որը կապահովի այդ համակարգի տեխնիկական պահպանումը և վերահսկողությունը⁸⁵:

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը մշակել է նաև «Կիրճեռանվտանգության մասին» օրենքի նախագիծն ու համապատասխան օրենսդրական փոփոխությունները: Նախագիծը սահմանում է կենսական նշանակության ծառայությունների մատուցման համար կիրառվող տեղեկատվական համակարգերում և կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքներում կիրճեռմիջադեպերի հայտնաբերման, ծանուցման, կանխարգելման և լուծման կարգը: Այն նաև սահմանում է կիրճեռանվտանգության համար պատասխանատու պետական կառավարման մարմինները և նրանց լիազորությունների շրջանակը, ներառյալ օրենքի պահպանման վերահսկողությունը և կիրճեռանվտանգության աուդիտը: Նախագիծը հանրային քննարկման նպատակով հրապարակվել է 2024 թվականի մարտին⁸⁶:

Գործողությունների ծրագրի իրականացման ժամկետի ավարտին նախագծերից ոչ մեկը դեռ չէր ընդունվել: Այսպիսով, հանձնառության վերջին միջանկյալ արդյունքը մնացել է անավարտ: Կառավարության ներկայացուցչի խոսքով՝ ուշացման հիմնական պատճառը հանրային տեղեկատվության և կիրճեռանվտանգության ոլորտում լիազոր մարմնի կարգավիճակի վերաբերյալ ընթացող ներքին քննարկումներն են, քանի որ անկախ մարմնի ստեղծման համար լրացուցիչ և ծավալուն օրենսդրական փոփոխություններ կպահանջվեն⁸⁷:

Տվյալ գեկույցը շարադրելու պահին այս հանձնառությունը դեռևս նշանակալի արդյունքներ չի արձանագրել՝ օրենսդրության ընդունման և ներդրման հետագա ակնկալիքով:

Պատասխանատու մարմնի ներկայացուցչի խոսքով՝ ընդունվելուց հետո օրենքը կարևոր դեր կխաղա տվյալների թվայնացման գործում և կնպաստի պետության կողմից տնօրինվող տեղեկատվության թափանցիկության կտրուկ աճի, քանի որ ցանկացած չգաղտնագրված տեղեկատվություն կհրապարակվի բաց տվյալների ձևաչափով՝ հանրային օգտագործման համար⁸⁸: Սակայն քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները գտնում են, որ նման բարեփոխում իրականացնելու համար տարիներ կպահանջվեն, քանի որ պետական կառավարման մարմինները դեռևս պետք է լիարժեք ապահովեն գործող օրենքով արդեն իսկ սահմանված՝ տեղեկատվության որոշակի տեսակների հրապարակման պահանջը: Շահագրգիռ կողմերից ոմանք նաև մտահոգություն հայտնեցին նախագիծը 2024 թվականի մարտին հրապարակելուց հետո բաց տվյալների օրենսդրության վերաբերյալ քաղաքացիական հասարակության հետ ակտիվ հաղորդակցության և քննարկումների բացակայության առիթով⁸⁹: Չնայած «e-draft» հարթակում նախագծի վերաբերյալ ներկայացվել է ավելի քան 20 մեկնաբանություն, իսկ կառավարությունը նշել է, որ այդ առաջարկներից մի քանիսը ընդունվել են, վերանայված տարբերակի վերաբերյալ դեռևս հանրային տեղեկատվություն չի տրամադրվել: 2024 թվականի նոյեմբերին մի քանի մեդիա կազմակերպություններ հայտարարություն տարածեցին՝ ընդգծելով նախագծի վերաբերյալ իրենց մտահոգությունները⁹⁰: Հայտարարության մշակմանը մասնակցած ոլորտային փորձագետը նշել է, որ չնայած կառավարությունը բաց է քննարկումների և առաջարկությունների համար, որոշակի, մասնավորապես՝ տեղեկատվության հասանելիության հնարավոր սահմանափակումների և անձնական տվյալների պաշտպանության սկզբունքների խախտման ռիսկերի հետ կապված հարցեր մնում են

չլուծված⁹¹: Միննույն ժամանակ, ՔՀԿ-ներն ընդգծում են տվյալների մասին օրենսդրության ներդրման կարևորությունը՝ արժևորելով դրա ներուժը թափանցիկությունը բարելավելու, պետության կողմից տնօրինվող տվյալների որակը ապահովելու, ինչպես նաև տեղեկատվության հասանելիությանը և մշտադիտարկման ավելի արդյունավետ ջանքերին նպաստելու հարցերում⁹²:

ԱՀՄ-ն խորհուրդ է տալիս օրենսդրական գործընթացն ավարտին հասցնելու ընթացքում շարունակել բաց երկխոսությունը քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների հետ: Հաշվի առնելով թափանցիկության և հանրային տեղեկատվության հասանելիության խթանման գործում տվյալների մասին օրենսդրության կարևոր դերը՝ իշխանությունները կարող են հասցեագրել տեղեկատվության հասանելիության և անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ հնարավոր սահմանափակումների վերաբերյալ դեռևս չփարատված մտահոգությունները: Ձուգահեռաբար, կառավարությունը կարող է կենտրոնանալ պետական հաստատությունների կարողությունների բարելավման վրա՝ այդ թվում ապահովելով պետական կայքերի ստանդարտացումը, «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով պահանջվող տվյալների լիարժեք հրապարակումը և բաց տվյալների սկզբունքների պահպանումը:

Հանձնառություն 2. Պետության ռազմավարական հաղորդակցության ճարտարապետություն

- | | |
|---|---|
| <ul style="list-style-type: none"> • Ստուգելի՝ այո • Արդյո՞ք այն համապատասխանում է բաց կառավարման շրջանակին՝ այո • Արդյունքին միտված ներուժը չափավոր | <ul style="list-style-type: none"> • Կատարման մակարդակը՝ զգալի • Նախնական արդյունքները՝ զգալի արդյունքներ |
|---|---|

Այս հանձնառությունը գնահատված է Բաժին II-ում:

Հանձնառություն 3. Տեղեկատվության ազատության ոլորտի ինքնագնահատման համակարգ

- | | |
|---|---|
| <ul style="list-style-type: none"> • Ստուգելի՝ այո • Արդյո՞ք այն համապատասխանում է բաց կառավարման շրջանակին՝ այո • Արդյունքին միտված ներուժը չափավոր | <ul style="list-style-type: none"> • Կատարման մակարդակը՝ զգալի • Նախնական արդյունքները՝ չափավոր արդյունքներ |
|---|---|

Հանձնառության ներքո տեղեկատվության ազատության ոլորտում ինքնագնահատման համակարգ ներդրվեց և փորձարկվեց: Պիլոտային ծրագրի համար ընտրվեցին պետական կառավարման երեք մարմիններ՝ ՀՀ վարչապետի աշխատակազմը, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (ԱՍՀՆ): Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ), որը տեղեկատվության մատչելիության ոլորտում մասնագիտացած ՔՀԿ է, մշակել է ինքնագնահատման ուղեցույց և գործիքակազմ: Այս փաթեթը ներառում է ինքնագնահատման մեթոդաբանությունը և

տեղեկատվության ազատության հետ կապված իրավական պահանջների վրա հիմնված ցուցանիշների շարք⁹³: ԻԱԿ-ը ուղեցույցը ներկայացրել է պիլոտային գերատեսչություններին և թեմատիկ աշխատաժողովների միջոցով օգնել է նրանց ինքնագնահատում իրականացնել⁹⁴: Այս գործողություններն իրականացվել են ԵՄ կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն բարեվարքության՝ Արևելյան գործընկերության համար» ծրագրի աջակցությամբ: Պիլոտային գերատեսչությունները հրապարակել են տեղեկատվության հարցումների վերաբերյալ տարեկան վիճակագրությունը՝ օգտագործելով ԻԱԿ-ի ստանդարտ ձևանմուշը⁹⁵:

Ըստ փորձնական իրականացմանը մասնակցող գերատեսչության ներկայացուցչի՝ ինքնագնահատումը նպաստել է տեղեկատվության հասանելիության վերաբերյալ ներքին քննարկումներին, հնարավորություն է տվել գերատեսչություններին գույքագրել առկա տվյալները և օգնել է ի հայտ բերել ավելի ընդգրկուն լուծումներ պահանջող համակարգային բացերը⁹⁶: Սակայն ինքնագնահատման արդյունքները չեն հրապարակվել: Շահագրգիռ կողմերը նշեցին, որ այս որոշումը կայացվել է՝ հաշվի առնելով, որ գործընթացը ծառայել է որպես ներքին ինքնահայեցողության գործիք, այլ ոչ թե արտաքին հաշվետվողականության մեխանիզմ⁹⁷: Կառավարությունը նախատեսում է ինքնագնահատման ուղեցույցը և միասնական ձևաչափով տեղեկատվության ազատության վիճակագրության հրապարակումն առաջարկել պետական կառավարման բոլոր մարմիններին⁹⁸:

Հանձնառությունը չափավոր նախնական արդյունք է գրանցել՝ ինքնագնահատման գործընթացի փորձարկման և տեղեկատվության հասանելիության բարելավման վերաբերյալ քննարկումների ծավալման շնորհիվ: Սակայն տեղեկատվության ազատության ոլորտում շոշափելի արդյունքներ դեռևս չեն արձանագրվել: Նշանակալի առաջընթաց ապահովելու համար կառավարությունը կարող է տեղեկատվության հասանելիության բարելավման գործում ակտիվորեն ներգրավել քաղաքացիական հասարակությանը: Որպես հետագա քայլ՝ շահագրգիռ կողմերը կարող են շարունակել օգնել պետական մարմիններին ինքնագնահատման գործելակերպի տարածման և փորձնական ծրագրի ընթացքում բացահայտված համակարգային խնդիրների լուծման գործում:

Հանձնառություն 4. Բյուջետային գործընթացում մասնակցային մեխանիզմների լրամշակում և ներդրում

- Ստուգելի՝ այո
- Արդյո՞ք այն համապատասխանում է բաց կառավարման շրջանակին՝ այո
- Արդյունքին միտված ներուժը՝ չափավոր

- Կատարման մակարդակը՝ սահմանափակ
- Նախնական արդյունքները՝ չափավոր արդյունքներ

Հանձնառության նպատակն էր հասցեագրել պետական բյուջեի մշակման գործընթացում հանրային մասնակցության ցածր մակարդակի խնդիրը: Այն նախատեսում էր ստեղծել պետական կառավարման մարմինների կողմից մշակված բյուջետային հայտերի

միասնական հարթակ, որտեղ քաղաքացիներին հնարավորություն կտրվեր իրենց ներդրումն ունենալ բյուջեի մշակման գործընթացում:

Մինչ հանձնառությունը պետական մարմիններն իրենց կայքերում տեղադրում էին առաջարկվող բյուջետային հայտերը և հանրությանը հրավիրում էին կարծիք հայտնել՝ նախքան հայտը կառավարությանը ներկայացնելը: Այս գործելակերպը շարունակվել է նաև գործողությունների իրականացման փուլում: Հանձնառության շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարությունն իր կայքում ստեղծել է մասնակցային բյուջետավորմանը նվիրված առանձին էջ: Էջը հնարավորություն է տալիս ներբեռնել բոլոր պետական մարմինների, այդ թվում՝ նախարարությունների, կոմիտեների, հանձնաժողովների, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և մարզպետարանների բյուջետային հայտերը, ինչպես նաև հղումներ է պարունակում համապատասխան մարմինների կողմից հրապարակված՝ բյուջետային հայտերի վերաբերյալ հանրային քննարկման հայտարարություններին: Այն դեպքում, եթե գերատեսչությունը հանրությունից առաջարկներ է հավաքագրել, տվյալ էջում հրապարակվում են նաև այդ առաջարկների ամփոփագրերը, ինչպես նաև դրանց ներառման վերաբերյալ տեղեկությունները⁹⁹:

Ֆինանսների նախարարությունը հավաքագրում և հրապարակում է այս տեղեկատվությունը պետական մարմինների տրամադրած տվյալների հիման վրա: 2025 թվականի փետրվարի դրությամբ էջը տեղեկատվություն էր ներառում 32 պետական մարմիններից 27-ի և բոլոր 10 մարզպետարանների բյուջետային հայտերի վերաբերյալ: Սակայն միայն հինգ գերատեսչություն էր հրապարակել հավաքագրված առաջարկները, իսկ մնացած գերատեսչությունները նշել են, որ որևէ առաջարկ չեն ստացել¹⁰⁰:

Քանի որ հանձնառությունը նախատեսում էր բյուջեի շուրջ քննարկումների ինտերակտիվ հարթակ ներդնել, ֆինանսների նախարարությունը տեխնիկական առաջադրանք է մշակել և բանակցել դոնորների հետ՝ նրանցից աջակցություն ստանալու համար¹⁰¹: Սակայն ֆինանսավորման բացակայության պատճառով հարթակը չի մշակվել գործողությունների ծրագրի իրականացման ժամկետում:

ԱՀՄ-ն այս հանձնառության ներքո արձանագրված նախնական արդյունքները գնահատել է որպես «չափավոր»: Ներկայիս կայքէջը ծառայում է որպես բյուջետային տեղեկատվության կենտրոնացված շտեմարան՝ բարելավելով թափանցիկությունը, բայց էապես չբարձրացնելով հանրային մասնակցության մակարդակը: Գործող հարթակի հիմնական սահմանափակումն այն է, որ բյուջետային քննարկումների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է պոստ ֆակտում սկզբունքով: Այսինքն, շահագրգռված անձինք միննույն է պետք է մուտք գործեն առանձին գերատեսչությունների կայքեր՝ քննարկումներին հետևելու և իրենց կարծիքը ժամանակին ներկայացնելու համար: Բյուջեի ոլորտում աշխատող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչը նշել է, որ հարթակը պետք է ներառի ինտերակտիվ բաղադրիչներ, օրինակ՝ անմիջական մեկնաբանության հնարավորություն, բաժանորդագրության տարբերակներ և բյուջետային հայտերի պարզեցված ամփոփագրեր՝ հանրության ավելի լայն ներգրավվածությունը խրախուսելու համար¹⁰²:

Ֆինանսների նախարարությունը պետական մարմիններին տրամադրել է հանրային քննարկումների կազմակերպման ձեռնարկ (որը մշակվել է գործողությունների ծրագրից առաջ) և մշտական կապի մեջ է գերատեսչությունների հետ՝ նրանց բյուջեի մասին

քննարկումների պահանջների մասին հիշեցնելու և աջակցություն տրամադրելու նպատակով: ԲԿԳ-ի՝ «ԵՄ-ն հանուն բարեվարքության» ծրագրի «Բաց դռներ» դրամաշնորհի շրջանակներում «Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոնը» (ACSES) իրականացրել է «Քաղաքացու բյուջե 2024՝ ավելի իրազեկ և ավելի ակտիվ քաղաքացի» ծրագիրը: ACSES-ը ինֆոգրաֆիկա, տեսանյութեր և հեռուստատեսային ռեպորտաժներ է հրապարակել 2024 թվականի պետական բյուջեի վերաբերյալ և Ֆինանսների նախարարության հետ համատեղ պատրաստել է 2024 թվականի քաղաքացու բյուջեն: ACSES-ի կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ մոտ 1,5 միլիոն մարդ դիտել է իրենց հրապարակումներից առնվազն մեկը, իսկ Ֆինանսների նախարարության և ACSES-ի ֆեյսբուքյան էջերում հրապարակված ինֆոգրաֆիկան ունեցել է 2,6 միլիոն ընդհանուր դիտում¹⁰³: Դռնբանների կողմից ֆինանսավորվող այլ նախաձեռնություններ ևս բարելավել են բյուջետավորման գործընթացի մասին հանրային իրազեկվածությունը և մասնակցությունը: Դրանցից են ԱՄՆ ՄԶԳ «Հանրային ֆինանսների կառավարման» ծրագիրը, որն աջակցում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը բյուջեի թափանցիկության և հանրության առջև հաշվետվողականության բարելավման գործում¹⁰⁴, և ԵՄ կողմից ֆինանսավորվող «Բյուջեներ քաղաքացիների համար» (B4C) ծրագիրը, որն ուղղված է հանրությանը մատչելի բյուջետային տեղեկատվության տրամադրմանը¹⁰⁵:

Որպես հաջորդ քայլ, կառավարությունը դիտարկում է ավելի ինտերակտիվ և օգտագործողին հարմար՝ հանրային մասնակցության հարթակ ստեղծելու տարբերակները: Ի լրումն հարթակի, քաղաքացիական հասարակության և կառավարության ներկայացուցիչները ընդգծում են ՔՀԿ-ների կարողությունների և մոտիվացիայի զարգացման անհրաժեշտությունը, որպեսզի բյուջետային քննարկումներին նրանց մասնակցությունն ավելի նախաձեռնողական և արդյունավետ լինի¹⁰⁶:

Հանձնառություն 5. Մասնակցային բյուջետավորում տեղական մակարդակում

- | | |
|---|--|
| <ul style="list-style-type: none"> • Ստուգելի՝ այո • Արդյո՞ք ք այն համապատասխանում է բաց կառավարման շրջանակին՝ այո • Արդյունքին միտված ներուժը չափավոր | <ul style="list-style-type: none"> • Կատարման մակարդակը՝ ավարտված • Նախնական արդյունքները՝ զգալի արդյունքներ |
|---|--|

Այս հանձնառությունը գնահատված է Բաժին II-ում:

Հանձնառություն 6. Քարտեզագրական տարածական տվյալների և մետատվյալների հասանելիությունը

- | | |
|---|--|
| <ul style="list-style-type: none"> • Ստուգելի՝ այո • Արդյո՞ք ք այն համապատասխանում է բաց կառավարման շրջանակին՝ այո • Արդյունքին միտված ներուժը չափավոր | <ul style="list-style-type: none"> • Կատարման մակարդակը՝ սահմանափակ • Նախնական արդյունքները՝ չափավոր արդյունքներ |
|---|--|

Հանձնառության նպատակն էր ստեղծել ազգային գեոպորտալ, որը հանրությանը հնարավորություն կտար որոնել և վերլուծել տարբեր պետական մարմիններից ստացված քարտեզագրական տարածական տվյալները և մետատվյալները¹⁰⁷: Պորտալը, ի թիվս այլ տարրերի, պետք է ներառեր տվյալներ անշարժ գույքի, մակերևութային ջրերի, անտառների, պահպանվող տարածքների, գյուղատնտեսության, կլիմայի, ենթակառուցվածքների և պատմամշակութային հուշարձանների վերաբերյալ և ապահովեր տվյալների անվճար հասանելիությունը՝ որոշ բացառություններով:

2023 թվականի հունվարին ընդունվեց «Տարածական տվյալների մասին» օրենքը, որը կարգավորում է տարածական տվյալների (տարածական օբյեկտների գտնվելու վայրի, տեսքի, չափերի և այլ բնութագրերի մասին տեղեկատվություն) հավաքագրումը, կառավարումը և մշակումը: Ըստ օրենքի՝ տարածական տվյալները պետք է հասանելի լինեն հետաքրքրված անձանց համար որոշակի վճարային սխեմայի համաձայն, սակայն մի շարք օգտատերերի, օրինակ՝ հետազոտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների համար վճար չի պահանջվում: Միննույն ժամանակ, օրենքում նշվում է, որ տարածական տվյալների ազգային գեոպորտալի համընդհանուր հասանելիությունը՝ որոնման և դիտման հնարավորությամբ, ապահովվում է անվճար: Գեոպորտալը պետք է ներառի տարածական օբյեկտների բազային բնութագրերի մասին տեղեկություններ և մետատվյալներ (տարածական տվյալների բովանդակության, որակի և պայմանների մասին մանրամասներ), իսկ գրանցված օգտատերերը տվյալների մշակման հնարավորություն կունենան¹⁰⁸: ԱՀՄ արդյունքների վերաբերյալ այս գեկույցը գրելու պահին գեոպորտալում առկա էր երկրի քարտեզը, որը թույլ է տալիս օգտատերերին դիտել տարածական օբյեկտների ուրվագծերը և արբանյակային պատկերները, ինչպես նաև դրանց կադաստրային համարները, եթե դրանք առկա են¹⁰⁹: Օգտատերերը կարող են նաև չափել օբյեկտները: Սակայն քարտեզի վերջին թարմացումը 2014 թվականին է արվել:

Չնայած շահագրգիռ կողմերը ընդունում են, որ գեոպորտալի ֆունկցիոնալությունը բարելավվել է, նրանք ընդգծում են առկա նշանակալի սահմանափակումները: Հարթակը չի տրամադրում այնպիսի էական տվյալներ, ինչպիսիք են անշարժ գույքի հասցեն, կոորդինատները կամ հետաքննությունների ու մշտադիտարկման համար անհրաժեշտ այլ կարևոր տեղեկություններ: Արդյունքում օգտատերերը միննույն է պետք է վճարեն էլեկտրոնային կադաստրի կայքից անշարժ գույքի վերաբերյալ մանրամասն տվյալներ ստանալու համար¹¹⁰: ԱՀՄ-ը առաջարկում է հրապարակայնորեն հասանելի և անվճար դարձնել առնվազն հողի, ջրի, անշարժ գույքի և այլ տվյալների վերաբերյալ բազային տեղեկատվությունը:

Հանձնառություն 7. Հանրային ծառայողների նվերների ռեեստր

- | | |
|--|---|
| <ul style="list-style-type: none"> • Ստուգելի՝ այո • Արդյո՞ք ք այն համապատասխանում է բաց կառավարման շրջանակին՝ այո • Արդյունքին միտված ներուժը՝ չափավոր | <ul style="list-style-type: none"> • Կատարման մակարդակը՝ զգալի • Նախնական արդյունքները՝ չափավոր արդյունքներ |
|--|---|

Այս հանձնառությունը գնահատված է Բաժին II-ում:

Հանձնառություն 8. Էլեկտրոնային գնումների համապարփակ համակարգ. իրական շահառուների ինստիտուտի կատարելագործում

- | | |
|---|---|
| <ul style="list-style-type: none"> • Ստուգելի՝ այո • Արդյոք ք այն համապատասխանում է բաց կառավարման շրջանակին՝ այո • Արդյունքին միտված ներուժը՝ չափավոր | <ul style="list-style-type: none"> • Կատարման մակարդակը՝ սահմանափակ • Նախնական արդյունքները՝ նկատելի արդյունքներ չկան |
|---|---|

Հանձնառության նպատակն էր միավորել պետական գնումների հետ կապված բոլոր համակարգերը մեկ հարթակում, որտեղ գնումների մասին տեղեկատվությունը կհրապարակվի անվճար և ինքնաշխատ եղանակով՝ բաց տվյալների չափորոշիչներին համապատասխան:

Հանձնառության կատարման մակարդակը սահմանափակ է և որևէ նկատելի արդյունք չի գրանցվել, քանի որ գնումների հարթակը պատրաստ չէր գործողությունների ծրագրի իրականացման ժամկետի ավարտին: Հետաձգման հիմնական պատճառը կառավարության ֆինանսների տեղեկատվական կառավարման համակարգի (ԿՖՏԿՀ) մշակման ձգձգումն էր, որը, ըստ նախնական պլանի, պետք է ներառեր էլեկտրոնային գնումների հարթակը¹¹¹: Այս հետաձգման պատճառով գնումների հարթակի մշակումն առանձնացվեց ԿՖՏԿ-ից, և 2024 թվականի ապրիլին պետական գնումների կայքում հարթակի համար մրցույթ հայտարարվեց¹¹²: Չորս հայտատու անցավ նախնական ընտրության փուլը, որին հաջորդեցին յուրաքանչյուր թեկնածուի հետ բանակցությունները 2024 թվականի երկրորդ կեսին: Հանձնառության մյուս միջանկյալ թիրախների իրագործումը, այդ թվում՝ կապալառուների ընտրությունը և պայմանագրի կնքումը, նախատեսվում է ավարտել մինչև 2025 թվականի ապրիլը¹¹³:

2023 թվականին ՀՀ ֆինանսների նախարարությունը հարթակի տեխնիկական առաջադրանքը քննարկեց շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, լրատվամիջոցների, ՔՀԿ-ների և բիզնես ընկերությունների հետ¹¹⁴: Հետագայում նախարարությունը ներկայացրեց վերանայված տեխնիկական առաջադրանքը և շահագրգիռ կողմերին հրավիրեց մասնակցելու պոտենցիալ կապալառուների հետ բանակցություններին¹¹⁵: ՔՀԿ ներկայացուցիչները բարձր գնահատեցին այն փաստը, որ նախարարությունը ականջալուր էր յուրաքանչյուր առաջարկին և պատրաստակամ էր դրանք հաշվի առնել տեխնիկական առաջադրանքի մշակման ընթացքում, ինչպես նաև արժևորեցին նախարարության շարունակական հաղորդակցությունը գործընթացի ողջ ընթացքում¹¹⁶: Թեև սա հանձնառության շրջանակից դուրս էր, կարևոր է նշել նաև, որ նախարարությունը նախաձեռնեց կառավարության մի որոշում, որը թույլ է տալիս հասարակական կազմակերպություններին և լրատվական գործունեություն իրականացնող անձանց մասնակցել պետական գնումների պայմանագրերի իրականացման վերահսկմանը, եթե նրանք նախապես դիմեն և ընդգրկվեն Ֆինանսների նախարարության համապատասխան ցուցակում¹¹⁷: 2024 թվականի նոյեմբերի դրությամբ այս ցուցակում ներառված էին 10 հասարակական կազմակերպություն և մեկ

լրատվամիջոց¹¹⁸: Գնումների պայմանագրերի նկատմամբ հանրային վերահսկողության հնարավորությունների ընդլայնումը կարող է նպաստել քաղաքացիական հասարակության փորձագիտական կարողությունների զարգացմանը և խրախուսել էլեկտրոնային գնումների հարթակի ավելի լայն օգտագործումը:

Առաջիկայում՝ կապալառուի ընտրությունից հետո, կառավարությունը պետք է ապահովի հարթակի սահուն մշակումը՝ առանց հետագա ուշացումների: Կառավարությունը կարող է նաև շարունակել ներգրավել քաղաքացիական հասարակությանը ինչպես հարթակի մշակման, այնպես էլ պայմանագրերի վերահսկողության գործընթացում՝ հանրային վստահությունն ու հաշվետվողականությունը բարելավելու նպատակով: Բաց տվյալների չափորոշիչների պահպանումը և օգտատերերի համար հարմարավետության ապահովումը կօգնեն առավելագույնի հասցնել հարթակի ազդեցությունը գնումների թափանցիկության տեսանկյունից: Պետական ծառայողների և մյուս շահագրգիռ կողմերի իրազեկումը և կարողությունների զարգացումը կենսական դեր կունենան հարթակի արդյունավետ օգտագործումն ապահովելու համար:

Հանձնառություն 9. «eCourt-statistics» վիճակագրական վերլուծական գործիք

- | | |
|---|---|
| <ul style="list-style-type: none"> • Ստուգելի՝ այո • Արդյոք ք այն համապատասխանում է բաց կառավարման շրջանակին՝ այո • Արդյունքին միտված ներուժը՝ չափավոր | <ul style="list-style-type: none"> • Կատարման մակարդակը՝ սահմանափակ • Նախնական արդյունքները՝ նկատելի արդյունքներ չկան |
|---|---|

Հանձնառության նպատակն էր էլեկտրոնային արդարադատության (e-justice) համակարգի միջոցով հրապարակել դատական վարույթների վիճակագրությունը՝ սկսած մինչդատական փուլից՝ հնարավորություն տալով օգտատերերին դատական գործընթացների վիճակագրական վերլուծություններ իրականացնել: Ակնկալվում էր, որ այս նախաձեռնությունը կբարելավի հանրային վերահսկողությունը և կաջակցի կառավարությանը փաստահեն դատական բարեփոխումների գործընթացում:

Հանձնառության կատարման մակարդակը սահմանափակ է: ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի առաքելության «Արդարադատության ոլորտի աջակցության» ծրագրի շրջանակներում իրականացվել է համադրելի երկրներում դատական վիճակագրական գործիքների լավագույն փորձի ուսումնասիրությունը¹¹⁹: ԵՄ կողմից ֆինանսավորվող «Բազմակողմանի ԲԿԳ գործողություն. բաց արդարադատության և հակակոռուպցիոն հանձնառություններ» ծրագրի շրջանակներում Իրավաբանների հայկական ասոցիացիան Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կռիվների հետ համատեղ կազմակերպել է ֆոկուսխմբային քննարկումներ՝ ոլորտում առկա խնդիրները և առաջարկությունները բացահայտելու համար¹²⁰: Բացի այդ, Իրավաբանների հայկական ասոցիացիան գույքագրել է առկա թվային բիզնես գործընթացները և վիճակագրական գործիքների հնարավորությունները, ինչը նախատեսված էր հանձնառության երկրորդ գործողությամբ:¹²¹

Հանձնառության մյուս գործողությունները, ներառյալ՝ անհրաժեշտ իրավական ակտերի և ծրագրային լուծումների մշակումը, չեն իրականացվել էլեկտրոնային արդարադատության

համակարգի բացակայության պատճառով, քանի որ հենց այդ համակարգը պետք է վիճակագրական մոդուլի հիմքում լիներ: ԵՄ կողմից ֆինանսավորվող «Հայաստանում էլեկտրոնային արդարադատության լուծումների մշակում և ներդրում» (2021–2023թթ.)¹²² տեխնիկական աջակցության ծրագրով պայմանագիր էր կնքվել համակարգը մշակողի հետ, սակայն ծրագրի ավարտին աշխատանքները չէին կատարվել: Դոնոր կազմակերպության ներկայացուցչի խոսքով՝ աշխատանքների կատարմանը խոչընդոտել են կապալառուի և կառավարության համակարգված համագործակցության բացակայությունը, ինչպես նաև պատասխանատու գերատեսչության ղեկավար կազմի հաճախակի փոփոխությունները¹²³: Կան նաև բազմաթիվ տեխնիկական մարտահրավերներ, այդ թվում՝ դատարանների առկա էլեկտրոնային համակարգերի թերությունները, թվային հարթակների միջև փոխգործելիության բացակայությունը և արդարադատության համակարգի որոշ հատվածներում տվյալները ձեռքով մուտքագրելու անհրաժեշտությունը¹²⁴:

Ներկայումս ՀՀ արդարադատության նախարարությունը, համագործակցելով Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության հետ, գնահատում է համակարգի կարիքները՝ հաջորդ քայլերը որոշելու համար¹²⁵: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները խորհուրդ են տալիս գործընթացը սկսել դատարանների կատարողականի չափման և գնահատման արդիականացման ճանապարհային քարտեզից՝ վիճակագրական գործիքները ներառելով որպես դատարանների արդյունավետության գնահատման, պլանավորման և կառավարման հիմնական մեխանիզմ, ինչպես դա արվում է Էստոնիայում¹²⁶:

Հանձնառություն 10. Աշխատանքային պայմանագրերի էլեկտրոնային համակարգ

- | | |
|--|---|
| <ul style="list-style-type: none"> • Ստուգելի՝ այո • Արդյո՞ք այն համապատասխանում է բաց կառավարման շրջանակին՝ ոչ • Արդյունքին միտված ներուժը չափավոր | <ul style="list-style-type: none"> • Կատարման մակարդակը՝ սահմանափակ • Նախնական արդյունքները՝ նկատելի արդյունքներ չկան |
|--|---|

Հանձնառության նպատակն էր էլեկտրոնային աշխատանքային պայմանագրեր ներդնել պետական և մասնավոր հատվածի աշխատողների համար: Պայմանագրերը հասանելի կլինեն մեկ հարթակում գործատուների և աշխատողների, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի և Պետական եկամուտների կոմիտեի համար, ինչը կնպաստի աշխատողների իրավունքների պաշտպանությանը, սովերային զբաղվածության նվազեցմանը և տեսչական մարմնին հնարավորություն կտա նախաձեռնողաբար հայտնաբերել աշխատանքային իրավունքների հնարավոր խախտումները:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (ԱՍՀՆ) մշակել է Աշխատանքային օրենսգրքի և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի փոփոխությունների նախագծերի փաթեթ, որը նախատեսում է աշխատանքային պայմանագրերի թվային համակարգի ներդրում: Օրենսդրական փոփոխությունների նախագծի փաթեթի շուրջ մի շարք հանրային քննարկումներ և իրազեկման միջոցառումներ են իրականացվել (ներառյալ լրատվամիջոցներում հրապարակումները, YouTube-ում

տեսանյութերը, համայնքային հանդիպումները և փորձագիտական քննարկումները)¹²⁷։ Աշխատանքային օրենսգրքի փոփոխություններն ընդունվել են 2024 թվականի դեկտեմբերին և ուժի մեջ կմտնեն 2025 թվականի հուլիսին։ Այս փոփոխությունների համաձայն՝ 2026 թվականի հունվարից սկսած գործատուները պարտավոր կլինեն աշխատանքային պայմանագրերի ստորագրումը, այդ թվում՝ աշխատանքային պայմանագրի կնքումը, դրանում արվող փոփոխությունները և պայմանագրի գործողության դադարեցումը, իրականացնել թվային համակարգի միջոցով, որի կամավոր օգտագործումը կմեկնարկի 2025 թվականի հուլիսից¹²⁸։ 2025 թվականին՝ իրականացման ժամկետից հետո, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հրապարակեց որոշման նախագիծ, որով սահմանվում են աշխատանքային պայմանագրերի թվային համակարգի պահանջները, տվյալներին հասանելիություն տրամադրելու և համակարգի միջոցով աշխատանքային պայմանագրեր կնքելու ընթացակարգերը, ինչպես նաև համակարգը կառավարող լիազոր մարմինը¹²⁹։ Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները շեշտում են համակարգի կառավարման համար պատասխանատու անկախ մարմնի անհրաժեշտությունը, որը կերաշխավորի, որ վերահսկողություն իրականացնող մարմինները անհրաժեշտ տեղեկություններին հասանելիություն կունենան միայն օրենքով սահմանված իրենց լիազորությունների շրջանակում։ Նրանք նշում են չարտոնված մուտքի, տվյալների արտահոսքի կամ չարաշահման հնարավոր ռիսկերի, ինչպես նաև անձնական և գաղտնի տեղեկությունների պաշտպանությանն ուղղված հստակ երաշխիքների և պատասխանատվության բացերի մասին¹³⁰։ Պատասխանատու նախարարության նախարարի տեղակալը նշեց, որ այդ ռիսկերը հնարավորինս մեղմվել են, այդ թվում՝ պետական ծառայողների կողմից պայմանագրերի տվյալների շտեմարան մուտք գործելու սահմանափակումների և հետազննչության միջոցով¹³¹։

Հանձնառությունը չունի բաց կառավարման հստակ տեսանկյուն, քանի որ այն չի խթանում ԲԿԳ-ի՝ թափանցիկության, հանրային հաշվետվողականության կամ քաղաքացիական մասնակցության արժեքներից որևէ մեկը։ Այնուամենայնիվ, երկարաժամկետ հեռանկարում թվային հարթակը հնարավորություն կտա Վիճակագրության պետական կոմիտեի և համապատասխան պետական մարմինների (ԱՍՀՆ, Էկոնոմիկայի նախարարություն և Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին) կողմից ավելի արդյունավետ կերպով և ժամանակին հավաքագրել ու հրապարակել զբաղվածության հետ կապված վիճակագրական տվյալները։ Որպես հետագա քայլ, ԱՍՀՆ-ն դիտարկում է զբաղվածության վերաբերյալ վիճակագրական տվյալների դաշտերի վերանայումը և ռիսկերի գնահատման այնպիսի ինքնաշխատ մեխանիզմների քննարկումը, որոնք կդրսևան հանրապետության և աշխատանքի տեսչության աշխատանքը։ Եթե այս քայլերն իրականացվեն, ապա վիճակագրական տվյալների շրջանակը կընդլայնվի, իսկ տեսչական մարմնի հաշվետվողականությունը կբարելավվի։

⁸⁰ Խմբագրի ծանոթագրություններ.

1. Փնջերով խմբավորված հանձնառությունների դեպքում արդյունքին միտված ներուժի և նախնական արդյունքների գնահատումն իրականացվել է փնջի, ոչ թե առանձին հանձնառության մակարդակում։
2. Հանձնառությունների կարճ վերնագրերը համառոտության նպատակով սկզբնական վերնագրերի խմբագրված տարբերակն են։ Հանձնառությունների վերնագրերի երկար տարբերակների համար տե՛ս՝ ՀՀ կառավարության «Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան» նախաձեռնության

շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2022–2024 թվականների գործողությունների ծրագիրը, ՀՀ կառավարության 2023թ. նոյեմբերի 9-ի N 1958-Լ որոշման հավելված, https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2022/10/Armenia_Action-Plan_2022-2024_Dec_Amended_EN.pdf: Հանձնառությունների բովանդակության գնահատման համար տե՛ս՝ Անկախ հաշվետվական մեխանիզմ, *Գործողությունների ծրագրի ուսումնասիրություն. Հայաստան 2022–2024* (Բաց կառավարման գործընկերություն, 15 հունիսի 2023թ.), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2023/06/Armenia_Action-Plan-Review_2022-2024_ARM.pdf:

⁸¹ Արտյոմ Մեսրոպյան (ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 31 հունվարի 2025թ.:

⁸² Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, «ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» (Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, 4 հունվարի 2024թ.), <https://www.e-draft.am/projects/6657>:

⁸³ ՔՀԿ չափիչ, «Armenia: Draft law on access to information criticised by CSOs» [Հայաստան. Տեղեկատվության հասանելիության մասին օրենքի նախագիծը արժանացավ ՔՀԿ-ների քննադատությանը] (European Center for Not-for-Profit Law Stichting, 30 հունվարի 2024թ.), <https://csometer.info/updates/armenia-draft-law-access-information-criticised-csos>:

⁸⁴ ՀՀ կառավարության հրապարակում (Facebook, 19 հունվարի 2024թ.), https://www.facebook.com/armgovernment/posts/pfbid0285afVRkLzjCM28K3ncZYDYDKzvVYxbZCNrjoGFFjuwz7zMEu_zhxXVSAhUffPVwkl, Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, «Աշխատանքային 2-րդ հանդիպումը՝ օրենքներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու նախագծերի շուրջ» (12 փետրվարի, 2024թ.), <https://hightech.gov.am/hy/tegekatvakan-kentron/ayl/norutyunner/draft-law-on-information>:

⁸⁵ Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, «ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, (12 մարտի 2024թ.), <https://www.e-draft.am/projects/6936/about>.

⁸⁶ Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, «ԿԻՔԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ», «ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (23 մարտի 2024թ.), <https://www.e-draft.am/projects/6970/about>:

⁸⁷ Մեսրոպյան, հարցազրույց:

⁸⁸ Նույնը:

⁸⁹ Սոնա Այվազյան (Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 6 փետրվարի 2025թ., Շուշան Դոյոյան (Ինֆորմացիայի ազատություն կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 21 հունվարի 2025թ., Մեղա Մուրադյան (Հանրային լրագրության ակումբ ՀԿ), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 7 փետրվարի 2025թ.:

⁹⁰ ՄեդիաԼաբ, «Լրագրողական կազմակերպությունների հայտարարությունը «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի լրամշակված նախագծի վերաբերյալ» (4 նոյեմբերի 2024թ.), <https://medialab.am/290409/>:

⁹¹ Գևորգ Հայրապետյան (CyberHUB, dpHUB), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 21 փետրվարի 2025թ.:

⁹² Մուրադյան, հարցազրույց, Այվազյան, հարցազրույց, Հայրապետյան, հարցազրույց:

⁹³ Ինֆորմացիայի ազատության կենտրոն, «ՏՄ ինքնազնադատման ուղեցույց» (9 հուլիսի 2023թ.), <https://foi.am/books/27514>:

⁹⁴ Ինֆորմացիայի ազատության կենտրոն, «ՏՄ ինքնազնադատման համակարգի ներդրում. աշխատանքային քննարկում ՏՄ պատասխանատվության հետ» (1 սեպտեմբերի 2023թ.), <https://foi.am/news-events/33345>, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, «ՏՄ ինքնազնադատման համակարգի գործարկումը. դասընթաց-քննարկում» (22 նոյեմբերի 2023թ.), <https://foi.am/news-events/31920>, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, «ԻԱԿ-ն աջակցում է տեղեկատվության ազատության ինքնազնադատման մեխանիզմի ներդրմանը» (15 դեկտեմբերի 2023թ.), <https://foi.am/news-events/33100>:

⁹⁵ Հայաստանի Հանրապետության կառավարություն, «Վիճակագրություն հարցումների վերաբերյալ» (հասանելի է եղել 2025թ. ապրիլին), <https://www.gov.am/am/Statistics/>, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, «Տեղեկատվություն ստանալու հարցումների վիճակագրություն», (հասանելի է եղել 2025թ. ապրիլին), <https://www.mlsa.am/statistic-information-requestes>, ՀՀ էկոնոմիկայի

նախարարություն, «ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից 2023 թվականի ընթացքում ստացած տեղեկություն ստանալու հարցումների վերաբերյալ» (հասանելի է եղել 2025թ. ապրիլին), <https://mineconomy.am/media/27701/Ardir-harcum.pdf>:

⁹⁶ Զարուհի Մանուչարյան (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 13 փետրվարի 2025թ.:

⁹⁷ Լիլյա Աֆրիկյան (ՀՀ վարչապետի աշխատակազմ), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 22 հունվարի 2025թ., Դոյդոյան, հարցազրույց:

⁹⁸ Աֆրիկյան, հարցազրույց:

⁹⁹ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, «Բյուջետային տեղեկատվության հանրայնացում», (հասանելի է եղել 2025թ. ապրիլին), https://minfin.am/hy/page/hy_government_list_1:

¹⁰⁰ Նույն տեղում:

¹⁰¹ Ռուզաննա Գաբրիելյան (ՀՀ ֆինանսների նախարարություն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 12 փետրվարի 2025թ.:

¹⁰² Հայկազ Ֆանյան (Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 14 փետրվարի 2025թ.:

¹⁰³ Արմինե Պետրոսյան (Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն), Էլեկտրոնային հաղորդակցություն ԱՀՄ հետազոտողի հետ, 30 ապրիլի 2025թ.:

¹⁰⁴ ԱՄՆ ՄԶԳ Հայաստան, հրապարակում (Facebook, 14 նոյեմբերի 2022թ.), (հասանելի է եղել 2025թ. հունվարին), <https://www.facebook.com/USAIDArmenia/posts/495486675944310>.

¹⁰⁵ Բյուջեներ քաղաքացիների համար, «Բյուջետային գիտելիքների փոխանակման հարթակ» (հասանելի է եղել 2025թ. ապրիլին), <https://budgets.am/en/about-platform>.

¹⁰⁶ Աֆրիկյան, հարցազրույց, Գաբրիելյան, հարցազրույց, Ֆանյան, հարցազրույց:

¹⁰⁷ Սույն նախաձեռնությունը սկսվել է նախքան գործողությունների ծրագրի ընդունումը և ներկայումս գործարկվում է փորձնական ռեժիմում՝ ընձեռելով քարտեզները և մետատվյալների կատալոգը տեսնելու հնարավորություն: Տե՛ս «ԱԶԳԱՅԻՆ ԳԵՈՊՈՐՏԱԼ», <https://geoportal.am/>:

¹⁰⁸ ՀՀ ՕՐԵՆՔԸ ՏԱՐԱԾՄԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ, (ARLIS, 17 հունվարի 2023թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=174026>:

¹⁰⁹ Քարտեզը տեսանելի է այստեղ՝ <https://maparmenia.am/>:

¹¹⁰ Գևորգ Թոսունյան (Սիվիլինթ), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 6 փետրվարի 2025թ.:

¹¹¹ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Թվային օրակարգ, ԿՖԿՏՀ ծրագիր (9 հունվարի 2024թ.), https://minfin.am/hy/page/kfcth_nakhagits/:

¹¹² Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն. Գնումների համակարգ, Գնումների հայտարարություններ (16 ապրիլի 2024թ.),

https://gnumner.minfin.am/hy/page/erkpul_mrcuyti_nakhaorakavorman_haytararutyun/:

¹¹³ Մերգեյ Շահնազարյան (ՀՀ ֆինանսների նախարարություն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 4 փետրվարի 2025թ.:

¹¹⁴ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, «Տեղի է ունեցել գնումների էլեկտրոնային համակարգի տեխնիկական առաջադրանքի նախագծի հանրային քննարկում» (19 մայիսի 2023թ.),

https://minfin.am/hy/content/teghi_e_unecel_gnumneri_elektronayin_hamakargi_tekhnikakan_arajadranqi_nakhagtsi_han_rayin_qnnarkum/, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, «Քննարկվել է գնումների էլեկտրոնային համակարգի տեխնիկական առաջադրանքի նախագիծը պետական գերատեսչությունների ներկայացուցիչների հետ» (22 մայիսի 2023թ.),

https://minfin.am/hy/content/qnnarkvel_e_gnumneri_elektronayin_hamakargi_tekhnikakan_arajadranqi_nakhagitsy_peta_kan_gerateschutyunneri_nerkayacucichn/, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, «Շարունակվում են գնումների էլեկտրոնային համակարգի տեխնիկական առաջադրանքի նախագծի հանրային քննարկումները» (23 մայիսի 2023թ.), https://minfin.am/hy/content/sharunakvum_en_gnumneri_elektronayin_hamakargi_tekhnikakan_arajadranqi_nakhagtsi_h_anrayin_qnnarkumneri/:

¹¹⁵ Շահնազարյան, հարցազրույց, Այվազյան, հարցազրույց:

¹¹⁶ Այվազյան, հարցազրույց, Արփինե Հակոբյան (ՀԿ կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 26 փետրվարի 2025թ.:

¹¹⁷ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 526-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», (ARLIS, 23 մայիսի 2024թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=193122>:

¹¹⁸ Պայմանագրերի կատարման նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնող ՔՀԿ-ների և մեղիա կազմակերպությունների ցանկը տե՛ս՝ <https://gnumner.minfin.am/website/images/original/13.11.2024.rtf>:

¹¹⁹ Ռուբինա Մխիթարյան (ՀՀ արդարադատության նախարարություն), էլեկտրոնային հաղորդակցություն ԱՀՄ հետազոտողի հետ, 24 հունվարի 2025թ.:

¹²⁰ Իրավաբանների հայկական ասոցիացիա, ««eCourt-statistics» վիճակագրական վերլուծական գործիք» հանձնառության վերաբերյալ ֆոկլուս խմբային քննարկում՝ պետական և մասնավոր կառույցների, ՔՀԿ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ» (24 հունվարի 2024թ.), <https://armla.am/51596.html>, Իրավաբանների հայկական ասոցիացիա, «Թափանցիկություն և հաշվետվողականություն՝ «eCourt-statistics» վիճակագրական վերլուծական գործիք» հանձնառության գործարկմամբ. կայացել է ֆոկլուս խմբային քննարկումը» (29 հունվարի 2024), <https://armla.am/51613.html>, Իրավաբանների հայկական ասոցիացիա, ««eCourt-statistics» վիճակագրական վերլուծական գործիք» հանձնառության վերաբերյալ 3-րդ ֆոկլուս խմբային քննարկում» (2 ապրիլի 2024թ.), <https://armla.am/52089.html>, Իրավաբանների հայկական ասոցիացիա, «Կայացավ 4-րդ ֆոկլուս խմբային քննարկումը «eCourt-statistics» վիճակագրական վերլուծական գործիք» հանձնառության վերաբերյալ» (8 ապրիլի 2024թ.), <https://armla.am/52133.html>:

¹²¹ Իրավաբանների հայկական ասոցիացիա, «Դատական վիճակագրության իրավական կառուցակարգերի կատարելագործում» փորձագիտական վերլուծություն (16 հուլիսի 2024թ.), <https://armla.am/53592.html>:

¹²² ԵՄ-ն Հայաստանի համար, «Development and Introduction of E-justice Solutions in Armenia» [Հայաստանում էլեկտրոնային արդարադատության լուծումների մշակում և ներդրում] (14 նոյեմբերի 2023թ.), <https://eu4armenia.eu/projects/eu-project-page/?id=1645>:

¹²³ Իրինա Մովսեսյան (ԵՄ պատվիրակություն Հայաստանում), էլեկտրոնային հաղորդակցություն ԱՀՄ փորձագետի հետ, 5 մարտի 2025թ.:

¹²⁴ Մարիամ Զադոյան (Իրավաբանների հայկական ասոցիացիա), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 5 փետրվարի 2025թ., Ռուբինա Մխիթարյան (ՀՀ արդարադատության նախարարություն), էլեկտրոնային հաղորդակցություն ԱՀՄ հետազոտողի հետ, 24 հունվարի 2025թ.:

¹²⁵ Մխիթարյան, հարցազրույց:

¹²⁶ Իրավաբանների հայկական ասոցիացիա, ««Դատական վիճակագրության իրավական կառուցակարգերի կատարելագործում» փորձագիտական վերլուծություն:

¹²⁷ Ռուբեն Սարգսյան (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 28 փետրվարի 2025թ., Նաիրա Առաքելյան (Արմավիրի զարգացման կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 24 փետրվարի 2025թ., Լուրեր, «Աշխատանքային պայմանագրերը կկնքվեն էլեկտրոնային եղանակով», (YouTube, 12 սեպտեմբերի. 2024թ.), <https://www.youtube.com/watch?v=nXJTIAU221s>, Yerevan Today, «Բոլոր աշխատանքային պայմանագրերը կնքվելու են միայն թվային համակարգի միջոցով. Ռուբեն Սարգսյան» (YouTube, 12 սեպտեմբերի 2024թ.), <https://www.youtube.com/watch?v=iCE8Y-4xzBY>, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով «Աշխատանքային քննարկում աշխատանքային պայմանագրերի և բարեգործական ծրագրերի վերաբերյալ», (11 դեկտեմբերի 2023թ.),

http://www.parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=11&month=12&year=2023&NewsID=19823&lang=arm&enc=utf8, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով «Քննարկվել են աշխատանքային պայմանագրերի էլեկտրոնային կնքման հարթակի ներդրմանը վերաբերող հարցեր» (21 դեկտեմբերի 2023թ.), http://www.parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=21&month=12&year=2023&NewsID=19870&lang=arm&enc=utf8:

¹²⁸ ՀՀ ՕՐԵՆՔԸ «ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (4 դեկտեմբերի 2024թ.), <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=201313>:

¹²⁹ Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԹՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ԹՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՎՅԱԼՆԵՐԻՆ ՀԱՄԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԹՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԹՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ» (20 փետրվարի 2025թ.), <https://www.e-draft.am/projects/8279>:

¹³⁰ Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԹՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ԹՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՎՅԱԼՆԵՐԻՆ ՀԱՄԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԹՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԹՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ» (20 փետրվարի 2025թ.), <https://www.e-draft.am/projects/8279/digest>:

¹³¹ Մարգարյան, հարցազրույց: